«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Արարատի պետակքան քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ՄՈՒՀ-ի կողմից ներկայացրած դիմում-հայտի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է Արարատի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ……4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ……..11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ……11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻԺ……..16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ……...16

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ……19

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ……21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ……27

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ……..32

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ……..35

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ……38

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ……40

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ……..43

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ……45

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ……47

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……..50

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ51

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ……53

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ……58

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ……61

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ……62

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ……63

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԱՊՔ-ն իր առաքելության համաձայն՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և Միջին մասնագիտական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը: ՄՈՒՀ-ը ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում»: ԱՊՔ-ի հիմնարար արժեքներն են՝ ուսանողի հաջողությունը, մատչելի կրթությունը, բարձրակարգ մանկավարժական կազմը, ակադեմիական ազատությունն ու ազնվությունը, հասարակական միջավայրը, սոցիալական գործընկերությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ կրթության ոլորտում ԱՊՔ-ի ծավալած գործունեությունն ու դրան միտված քաղաքականությունը ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, համահունչ է ՈԱԾ-ին՝ ապահովելով միջին մասնագիտական կրթություն: Սակայն ՄՈՒՀ-ի շահակիցների կողմից մրցակցային առավելություն է համարվում, որ իրենց ուսանողները կրթությունը շարունակեն ԲՈՒՀ-երում: ՈՒսանողների շրջանում ևս ամրապնդված է կրթության շարունակականության մոտեցումը: Իհարկե, չանտեսելով վերջինիս նշանակությունն ու կարևորությունը, պետք է ընդգծել, որ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման հեռանակարները պահանջում են «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների գծով պատրաստել միջին մասնագետներ, որոնք պահանջված կլինեն աշխատաշուկայում:

ԱՊՔ-ի «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում» միջին մասնագիտական կրթական ծրագրերը բավականին արդյունավետ են և տեղական աշխատաշուկայի համար կարող են գործնական հմտություններ ունեցող միջին մասնագետներ պատրաստել:

ԱՊՔ-ի արտաքին շահակիցները ներառված են ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում, սակայն նրանց կողմից ներկայացված գործուն առաջարկությունները, որոնք վերաբերում են ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը, դեռևս պլանավորման փուլում են: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ԱՊՔ-ն բաց է արտաքին շահակիցների հնչեցրած առաջարկությունների համար, սակայն աշխատանքներ պետք է տարվեն ուսանողների մոտ գործատուների կողմից պահանջված գործնական կարողությունների ձևավորման համար: Այս համատեքստում հարկ է նշել, որ ՄՈՒՀ-

ում դասավանդող գործատու դասախոսներ առկա չեն, ինչը կարող է խոչընդոտել այդ նպատակադրման իրականացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ, ընդհանուր առմամբ, ԱՊՔ-ի ռեսուրսները ներկա պայմաններում ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Միևնույն ժամանակ կարևորվում է, որ ՄՈՒՀ-ը, թեև ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, ունի արտաբյուջետային միջոցներ, որոնք ձևավորվել են վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, կարճաժամկետ ծրագրերից, ուղիներ է փնտրում ԱՊՔ-ի զարգացմանը միտված անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածության համար: Փորձագիտական խումբը տեսագրված տարբերակով ծանոթացել է ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական ռեսուրսներին, ուր առարկայական լսարանները հիմնականում բարվոք վիճակում են, առկա են միջոցառումների կազմակերպման համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, բուժսենյակ, լաբորատորիաներ: ԱՊՔ-ի նկատմամբ վստահության բարձրացմանը նպաստում են անվտանգ և ապահով միջավայրի ստեղծմանն ուղղված ՄՈՒՀ-ի աշխատանքները, չնայած՝ կրթական միջավայրից բավարարվածության գնահատումներ չեն անցկացվել:Նպատակահարմար է, որ ՄՈՒՀ-ը և գործատուները համատեղ ռազմավարությամբ կիրառեն իրենց մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսները:

2018 թ-ից ԱՊՔ-ն մշակել և հաստատել է կառավարման գործընթացներն ապահովող ընթացակարգեր, կանոնակարգեր, մշակել է 2018-2023թթ. Զարգացման ծրագիրը (Այսուհետ՝ ԶԾ): Ողջունելի է, որ գործընթացների կառավարման արդյունավետությունը ՄՈՒՀ-ը տեսնում է կառավարման, ուսանողական, մանկավարժական և այլ խորհուրդների միջև կառուցողական համագործակցությունը զարգացնելու մեջ, սակայն ներկա պայմաններում ԱՊՔ-ում գործող խորհուրդների միջև համագործակցության մեխանիզմները չեն գործում: Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ում ռազմավարական կառավարումն ու պլանավորումը արդյունավետորեն չեն իրականացվում: Ճիշտ է, կազմվում են տարեկան զարգացման ծրագրեր, պլաններ, գրվում են համապատասխան հաշվետվություններ, սակայն այդ կարճաժամկետ պլանները և դրանց կատարողականի հաշվետվությունները համադրելի չեն, այսինքն՝ այն, ինչ եղել է պլանավորված, դրա կատարման վերաբերյալ քանակական և որակական վերլուծությունները պետք է ներառված լինեն հաշվետվություններում: ՄՈՒՀ-ում ՈԱ կառավարման սկզբունքը պլանավորում-իրականացում փուլում է և գնահատումներ, բարելավման ենթակա խնդիրներ դեռևս առաջադրված չեն: Երբ պարբերաշրջանը սկսի գործել անխափան, արդեն կարող է դրսևորվել կառավարման համակարգի արդյունավետությունը և գործընթացներն ունենան շարունակական բարելավումներ: Մինչդեռ ԱՊՔ-ն բավարարվում է միայն ընթացակարգեր և կանոնակարգեր ունենալով, հաշվետվությունները նկարագրողական են, ներառում են կազմակերպական աշխատանքների վերաբերյալ նկարագրություններ, վերլուծություններ գրեթե չեն պարունակում, որակի ապահովման սկզբունքի պարբերաշրջանը ամփոփումներ չունի, տեսանելի չեն բարելավման ենթակա խնդիրները: Այս համատեքստում մշտադիտարկման մեխանիզմները չեն գործում: Արդյունքում ռազմավարական կառավարման մոտեցումները նույնպես չեն պահպանվում և վտանգվում է ԱՊՔ-ի երկարաժամկետ ռազմավարական կառավարումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսումնասիրվող ՄԿԾ-ները համապատասխանում են ՊԿՉ-ներին և մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը դիտարկել է, որ «Ֆինանսներ»,

«Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների գծով առկա է գործնական հմտությունների ապահովման խնդիր: Առցանց հանդիպումների ընթացքում դրա մասին հատկապես շեշտադրեցին գործատուները՝ ցանկություն հայտնելով, որ ուսանողները տիրապետեն ՀԾ-ին, բանկային ոլորտի գործնական հմտություններին, վերլուծական որոշ մեթոդների: ՄԿԾ-ներում առկա թեմատիկ համընկնումները, ինչպես նաև հանձնարարությունների, ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների թեմաների համընկնումները անմիջականորեն վտանգում են ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը: Դրան էլ զուգահեռ՝ ՄԿԾ-ներն ու ՄԾ-ները հիմնականում չեն բարելավվել, երբևէ չեն համադրվել այլ ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների և ՄԾ-ների հետ, ավելին՝ դրանք կազմելիս դասախոսներն օգտվել են ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերից, մասնագիտական գրականությունից: Արդյունքում վտանգվում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի ապահովումը: Քանի որ գործատուները չունեն իրենց գործուն մասնակցությունը ՄԿԾ-ների և ՄԾ-ների մշակմանը և իրագործմանը, իրականում կրթական գործընթացներին ներգրավվում են պրակտիկայի ժամանակահատվածում և չեն դասավանդում քոլեջում, նրանց շրջանում հարցումներ չեն կատարվում, ուստի տեղական աշխատաշուկայի կարիքները տարածելի չեն դառնում ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների իրականացման արդյունավետության վրա: Արդյունքում ԱՊՔ-ում կրթությունը տեսական հիմքերի վրա է և մրցակցային առավելություն է դառնում կրթության շարունակականությունը: Մինչդեռ ՄՈՒՀ-ը պետք է պատրաստի աշխատաշուկային համահունչ գործնական հմտություններով օժտված միջին մասնագետներ:

ԱՊՔ-ում ուսանողների հոսքը կայուն է, վերջին տարիներին աճի միտում ունի: ՄՈՒՀ-ը պարբերաբար ուսանողների հավաքագրմանը միտված աշխատանքներ է տանում, ուսանողների շրջանում ներդրել է հարցումների անցկացման կարգը: Կուրսղեկները բավականին ակտիվ գործունեություն են ծավալում ուսանողների խնդիրների վերհանման և դրանց լուծումների առումով, բացի դա ՄՈՒՀ-ում ձևավորվել է մանկավարժ-հոգեբանի հաստիքը և նա պարբերաբար հանդիպում է ուսանողներին: ՄՈՒՀ-ում գործում է նաև Կարիերայի կենտրոն, որը նոր է սկսել զբաղվել ուսանողների կարիերային նպաստող գործընթացներով:

ԱՊՔ-ի ուժեղ կողմերից է կայուն դասախոսական անձնակազմը, այստեղ դասավանդում են մանկավարժական փորձ ունեցող և հետաքրքիր մոտեցումներով երիտասարդ և միջին տարիքի դասախոսներ, որոնք պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Սակայն ԱՊՔ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին քիչ թվով դասախոսներ են մասնակցել, անհրաժեշտություն կա նաև վերապատրաստումներ կազմակերպել գործատուների մոտ: Դասախոսները միևնույն ժամանակ քոլեջում կարող են դասավանդել տարբեր մասնագիտությունների գծով տարբեր ՄԾ-ներ՝ վտանգելով դասընթացի արդյունավետությունը և կայունությունը: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ի դասախոսները գրեթե ողջ կազմով ներառված են ՈԱ գործընթացներին:

ԱՊՔ-ն ունի «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագիր», սակայն տարանջատված չեն երկարաժամկետ ռազմավարությունն ու միջնաժամկետ, կարճաժամկետ ծրագրերը: Այս համատեքստում, միջին մասնագիտական կրթության համար հետազոտությունները կարելի է դիտարկել վերլուծությունների շրջանակում և նշել, որ ԱՊՔ-ում ուսանողներին տրամադրվող որոշ հանձնարարականներ պարունակում են վերլուծական տարրեր, դասախոսների և ուսանողների կողմից կազմակերպվում են միջոցառումներ՝ կապված բիզնես ոլորտի ուսումնասիրությունների, մարքեթինգային վերլուծությունների հետ: Սակայն նշված

լավ փորձը տարածելի չէ և, ընդհանուր առմամբ, ստեղծագործ մտքի զարգացում ապահովող հանձնարարականներ առկա չեն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ն ունի ներդրված հաշվետվողականության համակարգ և եթե հաշվետվություններում վերլուծություններ ներկայացվեն, ապա դա կարող է խթանել ԱՊՔ-ի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման համար գործում են ՄՈՒՀ-ի կայքէջն ու ֆեյսբուքյան էջը, 2017թ.-ից պահպանվում է նաև կապը շրջանավարտների հետ: Պետք է առանձնացնել, որ ներքին և արտաքին շահակիցներն ունեն բավարար մասնակցություն ԱՊՔ-ում կազմակերպվող միջոցառումներին:

ԱՊՔ-ն ունի տեղական համագործակցության լայն շրջանակ և համագործակցում է միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ: ԱՊՔ-ն ձգտում է ընդլայնել արտաքին կապերը և համագործակցությունը տեղական, միջազգային կազմակերպությունների հետ, շարունակում է գործուն քայլեր ձեռնարկել արտաքին շահակիցներ ներգրավելու ուղղությամբ: Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ի դասախոսների ռուսաց լեզվի իմացության մակարդակը գնահատվում է լավ, այցի ընթացքում հարցադրումներից պարզվեց, որ դասախոսների և ուսանողների անգլերեն լեզվի իմացությունը գնահատվում է բավարար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱՊՔ-ի ջանքերն ուղղված որակի ներքին ապահովման համակարգի և որակի մշակույթի ներդրմանը: 2018թ.-ից կատարված աշխատանքները, որոնք վերաբերում են ընթացակարգերի, կանոնակարգերի մշակմանն ու գործարկմանը, հիմքեր են ստեղծել որակի ապահովման համակարգի կայացման համար: Այն կարող է նպաստել ՄՈՒՀ-ում կրթական գործընթացների կանոնակարգվածությանը և շարունակական բարելավմանը: Դրական է, որ որակի ապահովման գործընթացների կառավարման նպատակով ձևավորվել են առանձին հանձնաժողովներ, աշխատանքներին ներգրավված են մասնագիտական ներուժ ունեցող դասախոսներ: Վերոնշյալը նպաստում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման կառույցի կայացմանն ու աշխատակիցների մասնագիտական առաջընթացի ձեռքբերմանը: Հարկ է նշել, որ այդ գործընթացները դեռևս սաղմնային վիճակում են, և պլանավորված գործընթացներն իրականություն դարձնելու համար մեծ ջանքեր և ներդրումներ են պահանջվում՝ վերլուծությունների, հստակ պլանավորման և բարելավման մեխանիզմների կիրարկման համատեքստում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ԱՊՔ-ի ռազմավարական նպատակների և խնդիրների հստակությունը:
2) Կրթական ծրագրերն իրականացնելու համար համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայություն:
3) Մասնավոր հատվածի գործատուների ներգրավվածությունը «Գինեգործություն և հյութերի արտադրություն» ՄԿԾ-ում:
4) ՈՒսանողների կայուն հոսքը:
5) Կայուն դասախոսական անձնակազմ, երիտասարդ դասախոսների առկայությունը:
6) Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը, արտաբյուջետային միջոցների առկայությունը:
7) Անվտանգ և ապահով կրթական միջավայրի առկայությունը:
8) Ներդրված հաշվետվողականության համակարգը:
9) Տարածաշրջանային համագործակցության լայն շրջանակը:
10) Որակի ապահովման համակարգի ներդրումը և դասախոսների ներգարավվածությունը ՈԱ գործընթացներին:

11) Որակի ապահովման հանձնաժողովի անդամների մոտ որակի մշակույթի ձևավորման և զարգացման համար մոտիվացիայի առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Ռազմավարական կառավարման անարդյունավետությունը:
2) Գործատուների պահանջներին համապատասխան՝ պակաս գործնական հմտություններով միջին մասնագետների պատրաստումը:
3) Կառավարման արդյունավետության, պլանավորված գործունեության բացակայությունը:
4) Գործատուների սակավ մասնակցությունը ՄԿԾ-ների կառավարմանը:
5) Բոլոր գործընթացների, այդ թվում՝ ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականության բացակայությունը:
6) Գործատուների, դասախոսների և շրջանավարտների շրջանում հարցումների բացակայությունը:
7) ՈՒսանողների մոտ վերլուծական մտածողության և ստեղծագործ մտածելակերպի զարգացման հնարավորությունների պակասը:
8) Այլ ՄՈՒՀ-երի հետ համագործակցության բացակայությունը:
9) Գործատու դասախոսների քիչ լինելը:
10) Գործատուների հետ համատեղ ռազմավարության բացակյությունը: ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ որակական վերլուծությունների սակավությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) ԱՊՔ-ի ԶԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների ձևակերպման և իրականացման շրջանակում բարելավել ներքին և արտաքին շահակիցների ներգարավվածությունը:

2) ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատելի դարձնել նաև կարճաժամկետ կտրվածքով, իրականացնել որակական վերլուծություններ:

3) Բարելավել հաշվետվողականության համակարգը, դարձնել վերլուծական և պլանների հետ համադրելի:

4) ՄՈՒՀ-ի նպատակադրումներն առավել համապատասխանեցնել առկա հնարավորություններին:

Կառավարումն ու վարչարարությունը

1) Բարելավել հարցումները, ապահովել բոլոր շահակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրումը:

2) Հստակեցնել և կանոնակարգել կառավարման միջին օղակների՝ ամբիոնների գործառույթները, ուժեղացնել միջամբիոնային կապերը, ՄԿԾ-երի փոխկապակցվածությունը:

3) Մշակել և ներդնել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման քաղաքականություն:

4) Բարելավել կառավարման համակարգը՝ ուժեղացնելով հիեարխիկ կապերը:

5) Որոշումների կայացման հիմքում դնել տվյալների հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

1) Վերանայել ՄՈՒՀ-ի առաքելությունը՝ ընդգրկելով վերջին տարիներին ներդրված ՄԿԾ-ները:
2) ՄԾ-ների նախագծերը քննարկել, հաշվի առնել գործատուների կարծիքը և հաստատել ԱՊՔ-ի կառավարման խորհրդում:
3) Մշակել ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն:
4) Հստակեցնել գնահատման մեխանիզմները:
5) Իրականացնել ՄԿԾ-ների և ՄԾ-ների համեմատություն ՀՀ-ում գործող այլ ՄՈՒՀ-երի հետ:
6) Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմներ, ՄԿԾ-ները դարձնել արդյունավետ և ՄՈՒՀ-ի պլանավորման բաղկացուցիչ մաս:
7) Հանձնարարականներով չեզոքացնել ՄԾ-ների թեմաների համընկնումները:
8) Գործնական հմտությունների ձեռքբերմանն ուղղված գործատուների գործուն առաջարկները ներառել ՄԾ-ներում:

Ուսանողները

1) Ընդունելության գործընթացը բարելավելու համար ԱՊՔ-ի պաշտոնական կայքը համալրել մասնագիտությունները ներկայացնող նյութերով:
2) Բարելավել կրթական կարիքների վերհանման մեխանիզմները:
3) Բարելավել վերլուծական կարողություններին միտված հանձնարարականները:
4) Ուժեղացնել ՈՒԽ-ի գործունեությունը և ապահովել անկախությունը, որպես ինքնավար կառույց:
5) Բարելավել շրջանավարտների հետ կապը, ակտիվացնել կարիերայի կենտրոնի աշխատանքը:
6) Մեծացնել ուսանողների մասնակցությունը ԱՊՔ-ի կառավարման գործընթացներում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

1) Որակյալ դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կարդերի ընտրության համար որդեգրել մրցութային կարգը, հստակեցնել կոնկրետ առարկայի դասախոսին ներկայացվող պահանջները (կարողություններ, հմտություններ, գործառույթների շրջանակը):
2) Ուսումնական պրոցեսներում ներգրավել պրակտիկ դասավանդողների, նրանց ներգրավման ուղղությամբ մշակել հստակ քաղաքականություն:
3) Մշակել դասախոսական անձնակազմի կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ:
4) Կազմակերպել դասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատաստումներ (առանձին մասնագիտությունների գծով):
5) Կիրառել խրախուսման տարբեր ձևեր:
6) Մշակել անձնակազմի զարգացման և կայունության ապահովման ծրագիր:

Հետազոտությունը և զարգացումը

1) Մշակել հստակ մեխանիզմներ, որի արդյունքում կզարգանա վերլուծական մտածողությունը և ստեղծագործ միտքը ուսանողների և դասախոսների մոտ:
2) ՄԿԾ-ներում ներառել և դարձնել կիրառելի ուսանողներին տրվող վերլուծական բնույթի հանձնարարությունները, ինքնուրույն և թիմային աշխատանքները, ռեֆերատները, զեկույցները, հաշվի առնելով նաև գործատուների պահանջները:
3) Ներդնել դասախոսների խրախուսման մեխամիզմ՝ կապված հետազոտական աշխատանքների իրականացման հետ:

4) Ուժեղացնել համագործակցությունը տեղական և միջազգային կառույցների հետ՝ օգտագործելով առկա ներուժը՝ լավագույն փորձի ուսումնասիրման և տեղայնացման նպատակով:
5) Կազմակերպել տեղական և միջազգային փորձի փոխանակում հետազոտական աշխատանքների իրականացման համատեքստում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

1) Ձևավորել մասնագիտական անհրաժեշտ լաբորատորիաներ:
2) Բարելավել շենքային պայմանները՝ ապահովելով առավել անվտանգ միջավայր:
3) ՄԿԾ-ների արդյունավետ կառավարման նպատակով մշակել ռեսուրսների համալրման քաղաքականություն:
4) Մշակել գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառման քաղաքականություն:
5) Մշակել և ներդնել ռեսուրսների և կրթական միջավայրի արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հասարակական պատասխանատվությունը

1) Մշակել և ներդնել հաշվետվողականության կանոնակարգ, որակապես բարելավել հաշվետվությունները:
2) Բարելավել կայքէջն ու ֆեյսբուքյան էջը՝ տեղեկատվության մատուցման և հետադարձ կապի ապահովման տեսանկյունից:
3) Կանոնակարգել հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմները:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

1) Բարելավել արտաքին կապերը գործատուների հետ, մշակել և ներդնել համատեղ ռազմավարություն, ապահովել գործատուների հետ համատեղ կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործումը:
2) ՈՒժեղացնել համագործակցությունը շրջանավարտների և գործատուների հետ:
3) Ձեռնարկել քայլեր օտար լեզվի՝ մասնավորապես անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելու համար:
4) Ակտիվացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Որակի ներքին ապահովման համակարգը

1) ՈԱ հայեցակարգը դարձնել իրագործելիունեության տեսանկյունից առավել չափելի, հստակեցնել կատարման ժամկետներն ու պատասխանատուներին և դուրս հանել արդյունքները:
2) Պլանավորել ՈԱ գործընթացները, ակտիվացնել ներքին շահակիցներին և ներգարվել արտաքին շահակիցների:
3) ՈԱ հայեցակարգը համեմատել այլ ՄՈՒՀ-երի հայեցակարգերի կամ ՈԱ քաղաքականության հետ:
4) Կազմակերպել ՈԱ աշխատակիցների պարբերաբար վերապատրաստումներ և կատարելագործման աշխատանքներ:
5) Բարելավել հարցումների համակարգը, արդյունքների հրապարակումը:

Ամսաթիվ՝ 29.01.2021

_____

Արմենուհի Մհերյան

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ[1]

ԱՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմենուհի Միերյան**: Փորձագիտական խմբի ղեկավար, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս, Տնտեսագիտության թեկնածու /2006թ./, դոցենտ /2010թ./, երկիրը՝ Հայաստան:
- **Քրիստինե Հակոբյան**: Փորձագիտական խմբի անդամ, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ Աշխատակազմի ղեկավար, Տուրիզմի դասախոս, երկիրը՝ Հայաստան:
- **Լուսինե Սահակյան:** Փորձագիտական խմբի անդամ, Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջ Տնտեսագիտություն և Ինֆորմատիկայի դասախոս, երկիրը՝ Հայաստան:
- **Մարիամ Գյուրջյան**: Փորձագիտական խմբի անդամ, ուսանող-փորձագետ, Երևանի Պետական Համալսարանի Տնտեսագիտություն ֆակուլտետի 3 – րդ կուրսի ուսանող, երկիրը՝ Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ: Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ մասնագետ՝ Լիլիթ Ղազարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր: Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ .Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար: Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱՊՔ-ն 09.07. 2020թ.-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարություն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (23.07. 2020թ.) ՄՈՒՀ-ի, ՈԱԱԿ-ի և ԿԳՄՍ նախարարության հետ կնքվել է եռակողմ պայմանագիր:

COVID 19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորած ՄՈՒՀ-ը ժամանակացույցով նախատեսված ժամկետներից 2 շաբաթ ուշացումով, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն տարբերակով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ՄՈՒՀ-ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն: Քանի որ ԱՊՔ-ն առաջին անգամն էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով՝ ՈԱԱԿ-ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացման և հավատարմագրման գործընթացին: Հունիս ամսին ԱՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո ՄՈՒՀ-ն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: Աշխատակիցներն այդ ընթացքում ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին սույն թվականի հուլիսի 6-ին իրականացրել են մշտադիտարկում ԱՊՔ-ում:

ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 16.10.2020թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է ՄՈՒՀ-ի աշխատակիցների կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում համապատասխանել է սահմանված ձևաչափին, չնայած, առկա որոշ տեխնիկական և բովանդակային թերությունների:

Նախապատրաստական փուլ: ՄՈՒՀ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[2], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի ղեկավարը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված արդյունքի ձեռքբերմանը:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՊՔ ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ:

Քանի որ փորձագիտական այցերը եղել են առցանց և փորձագիտական խումբը չէր կարող այցեր կատարել հաստատության ստորաբաժանումներ, այդ իսկ պատճառով, ժամանկացույցում ներառված են եղել նաև հանդիպումներ, որի մասնակիցներին կարող էր ընտրել փորձագիտական խումբը. այս հանդիպումները թույլ են տվել փորձագետներին լրացնել այն տեղեկատվությունը, որը, ըստ փորձագետների, թերի կամ ոչ միանշանակ է եղել:

Նախանական այց: Պայմնավորված COVID 19 համավարակով՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց միջավայրում երկու շաբաթ առաջ փորձագիտական այցից, հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողները, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցերի պլան-ժամանակցույցը[3], ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում, որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան[4]՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաներ և այլն, քոլեջի կողմից փորձագետների կողմից պահանջված ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փարձագիտական այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝ տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խնմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Փորձագիտական այց :Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020թ. նոյեմբերի 23-26-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից երկու օր առաջ (22.11.2020թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը, ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը ունեցել են փակ հանդիպում առցանց միջավայրում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել առցանց միջավայրում իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով:

Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով, նախօրոք տրամադրված ցանկից (գործատուների և ամբիոնների վարիչների սակավ լինելու հանգամանքով պայմանավորված ներառվել են բոլորը): Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները. փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել առցանց միջավայրում:

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՊՔ փորձագիտական այցի ժամանակացույց:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՊՔ ուսումնասիրված ռեսուրսներ:

Տարբեր հանդիպումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, փաստաթղթերի ուսումնասիրության և քննարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ինչպես ամեն հանդիպման ավարտին, այնպես էլ՝ ամեն օրվա վերջում՝ այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ քննարկման և գնահատման ժամանակ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց: Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, քոլեջի կողմից ներկայացրած ռեսուրսների նկարահանման և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 24-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԱՊՔ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 13.01.2021 թ.: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին:

26.01.2021 թ.ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել է քոլեջի կողմից ներկայացրած պատասխանը:

Հաշվի առնելով քոլեջի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.01. 2021թ. :

29 հունվարի 2021 թ.

Լիլիթ Ղազարյան
Փորձագիտական խմբի համակարգող

Պատմություն. ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (Այսուհետ՝ ԱՊՔ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձ հանդիսացող, միջին մասնագիտական հաստատություն է: Քոլեջը հանդիսանում է Արարատի ինդուստրիալ– տեխնոլոգիական տեխնիկումի /գրանցման №13.0004.20.11.1996 թ./ իրավահաջորդը: ԱՊՔ-ն իր գործունեության վերջին 5 տարիների ընթացքում տվել է ավելի քան 900 շրջանավարտ, ովքեր, աշխատելով մեր երկրի տնտեսության տարբեր ոլորտներում, որպես միջին օղակի մասնագետներ, նպաստել են տարբեր կազմակերպությունների գործունեության առաջխաղացմանը: Նրանցից շատերը դարձել են մրցունակ մասնագետներ: Այսօր էլ քոլեջը շարունակում է իր գործունեությունը՝ որակյալ կադրեր պատրաստելով, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ մարզերի տարբեր ոլորտների համար, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգերում:

2019-2020 ուստարվա տվյալներով ԱՊՔ-ի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգերում սովորում է շուրջ 406 ուսանող: Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքները դրված են բարձր հիմքերի վրա:

Կրթություն. ԱՊՔ–ի նպատակն է՝ ապահովել կրթություն, որը հնարավորություն կտա ուսանողներին առավելագույնս դրսևորել իրենց ներուժը, միջին մսնագիտական օղակներում: ԱՊՔ-ն իր առաքելության առաջնային դերակատարությունը տալիս է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը, իր գործունեությունը նպատակաուղղում տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը:

Այսօր էլ ՄՈՒՀ-ը կրթական ծառայություններ է մատուցում հետևյալ մասնագիտություններով՝

- Միջին մասնագիտական կրթական համակարգ-9
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգ - 5
- Կարճաժամկետ ուսուցում՝ 2-ից մինչև 6 ամսյա տևողությամբ -7

Մինչև 2023 թվականը ԱՊՔ-ն կդառնա որակյալ կրթություն տրամադրող, նորարարական ուսանողամետ ուսուցում իրականացնող, սովորողների և աշխատողների շրջանում կատարելության սկզբունքները խրախուսող, ուսանողներին բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակող, հասարակության ամենատարբեր շերտերին մատչելի և ընտրության լայն հնարավորություններ ընձեռող, բարենպաստ միջավայր և լրացուցիչ կրթություն տրամադրող ուսումնական հաստատություն:

ՄՈՒՀ-ը կարևորում է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համապատասխանությունը քոլեջի առաքելությանը, կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին և դասախոսական կազմի սերնդափոխությանը, անընդհատ կատարելագործման գործընթացները, որն էլ միտված է դասավանդման և ուսումնառության բարելավմանը:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպ. Քոլեջի ռազմավարական հիմնախնդիրների և առաքելության նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նախանշել միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ, ճշտել այն խնդիրների ցանկը, որը կկարողանա լուծել արդի պահանջներին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար: Դրա համար անհրաժեշտ է ուսանողների մեջ արմատավորել աշխատանքների և հմտությունների նկատմամբ պատասխանատվության զգացողություն, մասնգիտական հմտությունների կատարյալ տիրապետում, ստեղծագործական մոտեցումներ: Ռազմավարական ծրագրում առանձնացվում են մանկավարժների ուսանողներին ներկայացվող հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները և պահանջները, որոնք իրականացվում են ինչպես մոդուլային ծրագրերի, այնպես էլ արտադրական, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում: Դրանց արդյունքները ներկայացվում են պրակտիկաների պաշտպանության ժամանակ, որոնք կարողանում են բացահայտել ուսանողին՝ որպես ինքնուրույն հետազոտող: Հետազոտական աշխատանքի անբաժան մասն են կազմում մշտադիտարկումներն ու հարցումները, որոնք իրականցվում են ինչպես ուսանողների, այնպես էլ մանկավարժների շրջանում: Նախագծային աշխատանքները էականորեն նպաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործնականում ակադեմիական գիտելիքների կիրառմանը: Հետազոտական աշխատանքներում մանկավարժների առավել մեծ թվով ներգրավվածություն կարելի է ապահովել կլոր սեղան-քննարկումներ անցկացնելու միջոցով, որոնցում ներգրավված կլինեն նաև այլ հաստատությունների (այդ թվում նաև այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, մանկավարժներ, մասնագետներ): Խիստ կարևորվում են հետազոտության և դասավանդման կապը, ստացված արդյունքները ուսումնական գործընթացում անմիջական կիրառումը, ինչպես նաև դրանց կանոնավոր և պարբերական բնույթը: Հետազոտության առանձին գործառույթ է իրականացնում Կարիերայի կենտրոնը, որն ուսումնասիրում է տարածաշրջանում աշխատաշուկայի պահանջարկը:

ՈՒսումնաարտադրական պրակտիկաների ընթացքում իրականացված հետազոտական աշխատանքների հիման վրա ծրագրված է ուսանողներին գնահատել ինքնուրույն հետազոտական աշխատանքների արդյունքով /հստակեցված պահանջներով նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն, նախորդ տարիներին՝ նաև օրագիր /հիմք՝ Պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ: Կրթական վերջնարդյունքների վրա հիմնված տարբեր մոդուլների/առարկաների շրջանակներում պահանջվող հետազոտական աշխատանքների կարողություն /օրինակ՝«Մարքեթինգային հետազոտությունների իրականացում» մոդուլից, բիզնես ծրագրերի կազմում:

Արտաքին կապեր: Քոլեջը կարևորում է սոցիալական գործընկերությունը՝ որպես սոցիալական համերաշխության և հասարակության ապահովման, ինչպես նաև խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց: Այս կոնտեքստում կարևորվում է՝ ԱՊՔ-ի հանրային կապերի հայեցակարգի վերանայումը, Մարքեթինգային գործողությունների հայեցակարգի մշակումը և գովազդային նյութերի բազմազանեցումը, Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ընդլայնումը և մշտադիտարկման համակարգի զարգացումը,

Հանրային ծրագրերին և նախաձեռնություններին քոլեջի ներգրավման ընդլայնումը և զարգացումը, հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցումը:

2018-2023թթ. քոլեջի զարգացման ծրագիրը նախատեսում է զարգացնել սոցիալական գործընկերությունը, սակայն միջազգային հարթակում դեռևս համագործցային և գործընկերային հարաբերություններ չկան: Կան միայն համագործակցություններ մի քանի միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների հետ՝ «Վորլդ Վիժն», ´´GIZ´´:

Կրթության շարունակականության հետ կապված՝ ԱՊՔ-ն համագործակցում է Հայաստանի առաջատար պետական ԲՈՒՀ-երի հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս քոլեջի լավագույն շրջանավարտներին կրթությունը շարունակելու գործընկեր ԲՈՒՀ-երում: Քոլեջն ակտիբորեն համագործակցում է գործատուների հետ:

Որակի ապահովում. ԱՊՔ-ն որպես առաջին քայլ՝ որդեգրվեց որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման քաղաքականություն, որը պետք է ուղիղ կապ ունենար քոլեջի առաքելության և ռազմավարության հետ: Քոլեջում որակի ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, սակայն այն դեռևս ամրապնդման խնդիր ունի: Վերջինս որպես կրթության ներքին որակի ենթակառուցվածք ձևավորվել է դեռևս 2015 թվականից, սակայն այն գործել է այլ հաստքի (պրակտիկայի բաժնի վարիչ) համատեղությամբ: ՀՀ ԿԳՄՄՆ կողմից հաստատված 2020թ. հունվարի հաստիքացուցակի համաձայն՝ ՄՈՒՀ-ում կրթության որակի ապահովման պատասխանատուի հաստիք է գործում:

Պարբերաբար վերանայման և թարմացման գործընթացը եղել է հարցումների տեսքով, դասալսումների վերլուծությունների, տարեկան վերլուծությունների, հաշվետվությունների տեսքով:

2017-2018 ուսումնական տարում մշակվել է քոլեջի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի հայեցակարգը: Այն իր մեջ ներառում է որակի ապահովման 73 համակարգի նպատակային կառավարման տեսլականը, մանրամասն հաղորդում է որակի ապահովմնան շրջանակում ԱՊՔ-ի անելիքները, նպատակները, խնդիրները, սկզբունքները, կիրարկման միջոցները, իրականացման ռազմավարությունը, չափանիշները, իրականացման մեխանիզմներն ու առաջնահերթ ոլորտները, դրանց ընթացակարգերն ու գնահատման գործիքները, որակի ապահովման հասկացությունները և որակի ապահովման հայեցակարգի և որակի ապահովման համակարգի քարտեզները:

ԱՊՔ-ի ներքին գնահատումն իրականացված է հաստատության անվտանգության, գործունեության արդյունավետության և ուսումնական գործընթացի որակի, համայնքային մասնակցության: Վիճակագրական տվյալների, փաստաթղթային վերլուծության, դիտարկման և փաստագրման հարցումների իրականացման և արդյունքների վերլուծության մեթոդներով իրականացվում է ներքին գնահատում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն իր առաքելությունը ձևակերպել է Կանոնադրության մեջ և 2018-2023թթ. Զարգացման ծրագրում (Այսուհետ՝ ԶԾ): Համաձայն առաքելության՝ ԱՊՔ-ն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը: Ըստ հաստատության առաքելության՝ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) կրթության 5-րդ մակարդակին համապատասխան:

ԱՊՔ-ն 2018-2023թթ. ԶԾ-ում առանձնացրել է թվով յոթ ռազմավարական նպատակ, տասնհինգ խնդիր՝ իրենց առաջընթացի գնահատման ցուցիչներով: Քոլեջը ձգտում է տրամադրել որակյալ կրթություն, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում: ԶԾ-ում ամրագրված են հետևյալ հիմարար արժեքները՝ ուսանողի հաջողություն, մատչելի կրթություն, բարձրակարգ մանկավարժական կազմ, ակադեմիական ազատություն և ազնվություն, հասարակական միջավայր, սոցիալական գործընկերություն:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ սահմանված ռազմավարական նպատակներն ու խնդիրները արտացոլում են ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացները՝ ապահովելով միջին մասնագիտական կրթության իրականացումը, և մրցակցային առավելություն է համարվում կրթության շարունակականությունը: ԱՊՔ-ի 2018-2023թթ. ԶԾ-ով նախատեսված նպատակների և խնդիրների բովանդակության, կատարման ժամկետների համաձայն՝ առկա է ՄՈՒՀ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարության գործողությունների ծրագիրը:

2018-2023թթ. ԶԾ-ի իրականացման համար մշակվել են ԱՊՔ-ի տարբեր ստորաբաժանումների Զարգացման ծրագրեր՝ ԱՊՔ 2019-2020 ուստարվա զարգացման ծրագիր, ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020 ուստարվա զարգացման ծրագիր, ԱՊՔ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025թթ. զարգացման ծրագիր, ԱՊՔ շրջանավարտների և հասարակության հետ կապերի ստորաբաժանման զարգացման ծրագիր, ԱՊՔ տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020թթ. զարգացման ծրագիր, ԱՊՔ ՔՊ շտաբի զարգացման ծրագիր, ԱՊՔ լեզուների հանձնաժողովի զարգացման պլան, նախնական մասնագիտական կրթական համակարգի ուսումնական մասի զարգացման ծրագիր:

ԱՊՔ-ի Ինքնավերլուծությունում նշված ներքին և արտաքին շահակիցներն են՝ ուսանողները, դասախոսական կազմը, ուսումնաօժանդակ անձնակազմը,

շրջանավարտները, ծնողները, ՀՀ կառավարությունը, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, գործատուները:

ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կառավարման մարմիններում և մշտապես կարծիքներ հայտնելու, առաջարկություններ անելու հնարավորություն ունեն: Սակայն փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների առաջարկություններն ամփոփված չեն և հստակ չեն երևում ՄՈՒՀ-ի ԶԾ-ում: Ինքնավերլուծությունում ևս թույլ կողմ է ներկայացվել արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը արդյունավետության գնահատումը: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ԱՊՔ-ի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակա բոլոր նպատակները հստակեցվում են կարճաժամկետ տարեկան պլաններում, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել զարգացման ռազմավարական ծրագրերի ընթացքը: Առկա են տնօրենի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, որոնք հիմականում տեղեկատվական և նկարագրողական բնույթի են:

ԶԾ-ում ձևակերպված յուրաքանչյուր խնդրի համար առկա են առաջընթացի գնահատման ցուցիչներ, բայց ձեռք բերված արդյունքները հաշվետվություններում գնահատված չեն:

Առցանց տարբերակով փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմներն առկա են, սակայն ամբողջապես չեն գործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ն ունի ՄՈՒՀ-ի հիմնական գործունեությունն արտահայտող հստակ և ընկալելի ձևակերպված առաքելություն: Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու կրթական ոլորտում ծավալած գործունեությունը համապատասխանում են սահմանված առաքելությանը: ՄՈՒՀ-ն իր առջև դրած նպատակներն ու խնդիրներն իրագործում է որդեգրած առաքելության շրջանակում, թեև փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ՝ որոշ առումներով քոլեջը ձգտում է, որ ուսանողներն իրենց կրթությունը շարունակեն բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը կարող է նվազեցնել ՄՈՒՀ-ն ավարտող ուսանողների՝ անմիջապես աշխատաշուկա դուրս գալու հնարավորությունները:

Թեև ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կառավարման մարմիններում, իրականացվում են որոշ հարցումներ, այդուհանդերձ, փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում արտաքին շահակիցների գործուն առաջարկությունները դեռևս պլանավորման փուլում են, շոշափելի չէ նրանց մասնակցությունը գործող ԶԾ-ի ռազմավարական նպատակների մշակմանը և իրագործմանը: Դասախոսները, ուսանողները ՄՈՒՀ-ի խնդիրների վերհանման գործընթացին ունեն քիչ մասնակցություն: Շրջանավարտները ևս պասիվ մասնակցություն են ցուցաբերել: Արդյունքում կարող է վտանգվել ԶԾ-ի արդյունավետությունը:

Քանի որ ԱՊՔ ԶԾ-ն մշակվել է 2018թ.-ին, ուստի դրանից հետո մշակված նոր մասնագիտությունների կրթական ծրագրերը ներառված չեն ԶԾ-ի առաքելությունում նշված ԱՊՔ-ի գործունեության ուղղությունների մեջ, ուստի վերոնշյալը կարող է խոչընդոտել ռազմավարական նպատակների հստակ սահմանամանը և իրագործմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ի կրթության որակի պատասխանատուի, դասախոսների և ուսանողների կողմից իրականացվել է ԱՊՔ-ի 2019-2020թթ. ներքին գնահատում և ներկայացվել է հաշվետվություն, որը, առավել վերլուծական դարձնելու պարագայում, հիմք կարող է հանդիսանալ հաջորդ Ռազմավարական ծրագիրը մշակելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ տնօրենի տարեկան հաշվետվությունն ընդհանուր առմամբ ներառում է ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման տարեկան արդյունքները: Սակայն ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն բավարար համադրելի չեն կարճաժամկետ տարեկան պլանների նպատակադրումներին, ինչը կարող է խոչընդոտել ԱՊՔ զարգացման և բարեփոխման ռազմավարության նպատակների իրագործմանը:

Թեև ԱՊՔ-ի ԶԾ-ում առկա են առաջադրված խնդիրների առաջընթացի գնահատման ցուցիչներ, այդուհանդերձ, ցուցիչների գնահատման հիմնավորումներ առկա չեն այն առումով, որ գնահատականները հստակ չեն արտացոլում դրված խնդիրների կատարման աստիճանը: Արդյունքում՝ կարող են վտանգվել ԶԾ-ի ռազմավարական նպատակների իրականացման նկատմամբ ընթացիկ մշտադիտարկումը և բարելավման ենթակա արդյունքները:

Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ ՄՈՒՀ-ում առկա են առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները, որոնց ամբողջությամբ գործարկելու պարագայում կբարձրանա բարելավման գործընթացների արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ ՊՈԱԿ-ի գործունեությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությանը, համահունչ է ՀՀ ՈԱՇ-ին, հաստատության նպատակներն ու խնդիրները, որոշ չափով արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման համար գործունեության գնահատման մեխանիզմները առկա են, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 1**-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ԱՊՔ-ի կառավարումն իրականացվում է «Կրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների հիման վրա, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված ՄՈՒՀ-ի կանոնադրությանը համապատասխան, ՄՈՒՀ-ի կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրենի գործառույթների իրականացմամբ: Ինքնավերլուծությունում նշվում է, որ

ԱՊՔ-ի կառավարումն իրականացվում է ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ։

ԱՊՔ-ի կառավարման համակարգն ունի՝

- Հիմնադիր և պետական կառավարման լիազոր մարմիններ, որոնք իրականացնում են քոլեջի կառավարումը,
- Քոլեջի խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, տնօրեն, որոնց միջոցով իրականացվում է ընթացիկ կառավարումը։

ԱՊՔ Խորհուրդը կառավարաման բարձրագույն մարմինն է, որի լիազորության ժամկետը 5 տարի է։ Խորհուրդը քննարկում, հաստատում է ՄՈՒՀ-ի բյուջեն, զարգացման ռազմավարական պլանը, լսում և գնահատում է տարեկան գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը, ընտրում է ՄՈՒՀ-ի տնօրեն։

Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, սահմանված կանոնակարգով, իրեն տրված լիազորությունների շրջանակում քննարկում է համապատասխան ոլորտներին վերաբերող հարցեր։ ԱՊՔ-ում գործում են նաև Մեթոդական խորհուրդը, ՈՒսանողական խորհուրդը, Կուրսղեկական խորհուրդը, Գրադարանային խորհուրդը, նախատեսվում է ստեղծել Ծնողական խորհուրդ։ ԱՊՔ-ում առկա են կառավարման գործընթացներն ապահովող ընթացակարգեր, կանոնակարգեր։

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ն իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է ՌԾ-ով, որի հիմնախնդիրներից է կառավարման արդյունավետության ապահովումը։ Ըստ այդ հիմնախնդրի՝ կառուցողական համագործակցություն պիտի զարգանա ՄՈՒՀ-ի Կառավարման, ՈՒսանողական, Դասախոսական և այլ խորհուրդների միջև։

ՄՈՒՀ-ն ունի կազմակերպական կառուցվածք, 2020թ. հունվարից կատարվել է կառուցվածքային փոփոխություն, ավելացել են հաստիքներ։ Առցանց տարբերակով փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը հիմնավորված չէ այն առումով, որ առկա չեն այդ փոփոխությունների իրականացման գնահատականները։

ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսները ձևավորվում են ՀՀ պետական բյուջեից, վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, կարճաժամկետ ծրագրերից և այլ մուտքերից։ Ըստ Ինքնավերլուծության՝ ծախսերը պլանավորվում են՝ ելնելով ՄՈՒՀ-ի կարողություններից։ Առկա է ֆինանսների տնօրինման ընթացակարգ։

ԱՊՔ-ն ունի կրթական և այլ նպատակների իրականցման համար անհրաժեշտնյութական և մարդկային ռեսուրսներ։ Աշխատակիցների աշխատանքի ընդունումը, տեղափոխումը, հեռացումը, առաջխաղացումը, խրախուսումը և տույժերն իրականացվում են ըստ ՀՀ Սահմանադրության, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» և այլ օրենքների ու իրավական ակտերի, ներքին կանոնակարգերի, ՄՈՒՀ-ի կանոնադրության ու ներքին կարգապահական կանոնների։ ԱՊՔ-ի ԿԽ-ը, ՄԽ-ը, ՈՒԽ-ը և գործող Կանոնադրությունն ու ստորաբաժանումների կանոնակարգերը ուսանողներին և դասախոսներին հնարավորություն են ընձեռում ներգրավել կառավարման գործընթացներում։ ԿԽ-ի կազմում ընդգրկված է դասախոսական կազմից 2 ներկայացուցիչ, ուսանողական կազմից՝ 3 ներկայացուցիչ, ովքեր ընտրվել են դասախոսական համակազմից և ՈՒԽ-ից։ ՄԽ-ը նիստեր է գումարում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, ուր ընդգրկված են դասախոսական և վարչական ողջ կազմը։

Անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրվել նաև ՈՒԽ-ի նախագահը: Ըստ Ինքնավերլուծության՝ ՈՒԽ-ն առաջարկություններ է ներկայացնում ՄՈՒՀ-ի տնօրինությանը և ԿԽ-ին:

Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը՝ նվազագույնն է: Այն վեր հանված կարիքներն ու առաջարկները, որոնցով հանդես են եկել ուսանողներն ու դասախոսները, տեսանելի չեն:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ռազմավարական պլանավորում և ընթացիկ տարեկան պլանավորում: ՄՈՒՀ-ում, առաքելություններին և նպատակներին համապատասխան, մշակվել և գործում է ԱՊՔ-ի 2018-2023թթ. ՋԾ-ն, դրան կից՝ ԱՊՔ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարության գործողությունների ծրագիրը, ԱՊՔ վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2020-2025 թթ. զարգացման ծրագիրը, ԱՊՔ 2019-2020 ուստարվա զարգացման ծրագիրը, ԱՊՔ ուսումնական մասի 2019-2020 ուստարվա զարգացման ծրագիրը, ԱՊՔ Տնտեսագիտական հանձնաժողովի 2019-2020թթ. զարգացման ծրագիրը, ԱՊՔ Լեզուների հանձնաժողովի զարգացման պլանը, 2018թ.-ին մշակվել և գործում է ԱՊՔ կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի (հանձնաժողովի) հայեցակարգը:

Ըստ Ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է ռազմավարական պլանավորում՝ ուղղված ԱՊՔ-ի զարգացման և բարեփոխումների երկարաժամկետ պլանավորմանը, և ընթացիկ տարեկան պլանավորում, այն ուսումնական գործընթացի օպերատիվ պլանավորումն է: Այդ մակարդակներից յուրաքանչյուրն ունի իր իրագործման մեխանիզմները: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ այդ մեխանիզմները ՄՈՒՀ-ում հստակ չեն գործում, հստակ չեն նաև ռազմավարական և ընթացիկ պլանավորումների մշտադիտարկման մեխանիզմները, նաև հստակեցված չէ մշտադիտարկման քաղաքականությունը: Երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները համադրելի չեն: Բացի դա, ՄՈՒՀ-ում կառավարման միջին օղակների՝ ամբիոնների գործառույթների բաշխումը ևս հստակեցված չէ, միջամբիոնային համագործակցությունները տեսանելի չեն:

2019-2020 ուստարվա Տնտեսագիտական հանձնաժողովի և Լեզուների ամբիոնի զարգացման ծրագրերում ընդգրկվել են գործառույթներ, որոնք, ըստ էության արտահայտում են մեկ տարվա զարգացման ծրագրի գործառույթները, ուր ևս միջամբիոնային համագործակցություններն արտահայտող գործառույթներ չեն ներառվել[5]:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ կարճաժամկետ գործառնական պլանավորումը իրականացվում է ԱՊՔ-ի բոլոր ուղղություններով՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների, գույքի, կրթական ծրագրերի, և այլն, ինչը հստակ կերպով արտահայտվում է տնօրենի տարեկան հաշվետվություններում: Տնօրենի 2019-2020 ուս. տարում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունում, ըստ հաստատության նպատակների իրականացման արդյունքների, ներկայացված են

[5] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

ՄՈՒՀ-ի ուսումնանյութական բազան, աշխատակազմի, ընդունելության տվյալները, ուսանողների առաջադիմությունը, արտադրական ուսուցումը, շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Միջին մասնագիտական կրթական համակարգի ուսմասի հաշվետվությունը, հանրակրթական ծրագրով բաժնի ուսումնական աշխատանքները, ՄԽ-ի կողմից կատարված աշխատանքները հաշվետվությունում ներկայացված են կազմակերպական աշխատանքների կատարման տեսանկյունից, Կարիերայի կենտրոնի, շրջանավարտների և Հասարակության հետ կապերի բաժնում կատարած աշխատանքները վերաբերում են քոլեջային կրթությունից հետո ՀՀ տարբեր բուհեր կրթութունը շարունակելու հարցերին, ներկայացվել են շարունակական կրթության տարբերակներ, առավելություններ: Տնօրենի հաշվետվության եզրակացությունների և առաջարկությունների բաժնում գնահատականներ և համապատասխան առաջարկություններ առկա չեն, կարևորվում է բուհերում կրթությունը շարունակելու հնարավորությունը: Փորձագիտական խմբի այցից ևս պարզ է, որ գործառնական պլանավորման մեխանիզմները նույնպես հստակ չեն աշխատում, կարճաժամկետ պլանների և դրանց կատարողականների հաշվետվությունները համադրելի չեն: Տարեկան պլանների իրականացումն ու գնահատումը կատարվում է ԿԽ-ի, ՄԽ-ի ստորաբաժանումների և տնօրենի հաշվետվությունների հիման վրա, մինչդեռ, հաշվետվությունները նկարագրողական են, առկա չեն գործունեության գնահատման որակական մոտեցումներ, համապատասխան գնահատականներ:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություններն ու վերլուծությունը պարբերաբար իրականացվող ներքին գործընթացներ են, որոնք շարունակաբար իրականացվում են ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով: Դրական գործոններ են՝ շենքային պայմանները, ներքին կահավորվածությունը (Գինեգործության և «Արմաթ» լաբորատորիաներ, հագեցած առարկայական կաբինետներ): Բացասաբար են անդրադառնում՝ ոչ բարեկարգ սպորտդահլիճը, փոխադրամիջոցների բացակայությունը, ֆինանսական միջոցների սակավությունը:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում բանավոր ներկայացվեց, որ ՄՈՒՀ-ում առկա են գործունեության վրա ազդող գործոնների տվյալներ, մինչդեռ տվյալների հավաքագրման և վերլուծությունների մեխանիզմները հստակ չեն: Առկա է 2019-2020թթ. Ներքին գնահատման հաշվետվությունը, ուր ներկայացված են ԱՊՔ-ի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը, ԱՊՔ-ի գործունեության արդյունավետությունը, համայնքային մասնակցությունը գնահատող ցուցանիշներ և չափանիշներ, առանձնացված են հաստատության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, ուժեղ և թույլ կողմերը: Այդուհանդերձ, հստակ գնահատականներ և բարելավման ուղիներ նախանշված չեն: Հարցումներ անցկացվում են միայն ուսանողների շրջանում, գործատուների, դասախոսների և շրջանավարտների շրջանակներում հարցումներ չեն կատարվում:

ԱՊՔ-ի 2018թ-ի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի հայեցակարգով սահմանված են որակի ապահովման հիմնական սկզբունքները և, ըստ դիտարկվող ժամանակահատվածի, չի դրսևորվում քաղաքականության և

վարչարարության իրականացման որակի կառավարման սկզբունքի գործողությունը՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում փոխադարձ կապերը: Փորձագիտական խմբի առցանց այցից ևս պարզ դարձավ, որ որակի կառավարման սկզբունքը պարբերաշրջանի առանձին փուլերի կատարողականի և հաշվետվողականության առկայությամբ, դեռևս տեսանելի չէ: Առկա չեն կատրաման արդյունքներ, գնահատականներ: Գնահատականներ առկա չեն նաև ԱՊՔ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված քայլերի կատարման համար:

Փորձագիտական վերլուծությունները փաստում են, որ ՄԿԾ-երի և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման կիրառումը գնահատող գործուն մեխանիզմները բացակայում են: ՄՈՒՀ-ում առկա են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ, որոնց արդյունքների վերլուծությունները չեն կիրառվում ՄԿԾ-ների լավարկման համար:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ գործող կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տեղակայված է ԱՊՔ-ի պաշտոնական կայքում (www.ascol.am) և ֆեյսբուքյան էջում (www.apq.am): Որակավորման և ՄԿԾ-երի ուղղությամբ տեղեկության տարածումն իրականացվում է ինչպես դիմորդների, այնպես էլ ԵՊՀ-ի կողմից անցկացվող ամենամյա օլիմպիադաների մասնակիցների շրջանում: Ըստ Ինքնավերլուծության՝ 2019-2020 ուստարվա դիմորդների թվաքանակի գերազանցումը նախատեսված պլանից վկայում է տեղեկատվության հասանելիության, մատչելիության և օբյեկտիվության մասին: Փորձագիտական առցանց այցը ամբողջությամբ ներառող ժամանակահատվածում փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված կայք էջում առկա էր ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվություն, ֆեյսբուքյան էջում զետեղված էր թարմ տեղեկատվություն, տեղեկատվությունը սահմանափակ էր շրջանավարտների, նրանց որակավորումների, հաջողությունների մասին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ ԱՊՔ-ում առկա են կառավարման գործընթացներն ապահովող ընթացակարգեր, կանոնակարգեր: Թեև Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի կառավարումն իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, ՄՈՒՀ-ն իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է ռազմավարական ծրագրով, որի հիմնախնդիրը կառավարման արդյունավետության վերջնական ծառայությունների իրականացումն է և ըստ այդ հիմնախնդրի՝ կառուցողական համագործակցություն պիտի զարգանա ՄՈՒՀ-ի կառավարման, ուսանողական, մանկավարժական և այլ խորհուրդների միջև, սակայն փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործող տարբեր խորհուրդների միջև կառուցողական համագործակցության գործուն մեխանիզմներ գրեթե առկա չեն, ինչը կարող է վտանգել կառավարաման կոլեգիալության սկզբունքը, կառավարչական որոշումների կանոնակարգվածությունը:

Քանի որ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում 2020թ.հունվարից կատարվել է կառուցվածքային փոփոխություն, ավելացել են հաստիքներ և առկա չեն այդ փոփոխությունների գնահատականները, ուստի կարող է վտանգվել կատարված կառուցվածքային փոփոխության արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ ԱՊՔ-ն ունի կրթական և այլ նպատակների իրականացման համար բավարար նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Վերջիններս ձևավորվում են ՀՀ պետական բյուջեից, վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, կարճաժամկետ ծրագրերից, ինչը դրականորեն է անդրադառնում ըստ ՄՈՒՀ-ի կարողությունների ծախսերի պլանավորման վրա: Հատկանշական է, որ առկա է ֆինանսների տնօրինման ընթացակարգ:

Թեև ուսանողներն ու դասախոսները ներգրավված են ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացներում, կարող են առաջարկություններ ներկայացնել ՄՈՒՀ-ի տնօրինությանը և կառավարման խորհրդին, այդուհանդերձ, փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ նրանք գրեթե չունեն գործուն մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը՝ վտանգելով կառավարչական որոշումների կոլեգիալության սկզբունքը:

Թեև Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող ռազմավարական պլանավորումն ու ընթացիկ տարեկան պլանավորումն ունեն իրենց իրագործման մեխանիզմները, այդուհանդերձ, այդ մեխանիզմները ՄՈՒՀ-ում հստակ չեն գործում, հստակ չեն նաև ռազմավարական և ընթացիկ պլանավորումների մշտադիտարկման մեխանիզմները, ինչը խոչընդոտում է մշտադիտարկման քաղաքականության իրագործմանը: Քանի որ ՄՈՒՀ-ում հստակեցված չեն կառավարման միջին օղակների՝ ամբիոնների գործառույթները, ինչի արդյունքում միջամբիոնային կապերը լավ չեն աշխատում, ուստի վտանգվում է նաև ՄԿԾ-ների կառավարման արդյունավետությունը:

Անհանգստացնող է, որ ԱՊՔ-ի 2018-2023թթ. ԶԾ-ում ներկայացված առաջընթացի գնահատման ցուցիչները չեն արտացոլում սահմանված նպատակների և խնդիրների իրականացման որակական կողմը: Նաև մտահոգիչ է, որ գործառնական պլանավորման մեխանիզմները ևս հստակ չեն աշխատում՝ կարճաժամկետ պլանները և դրանց հաշվետվությունները համադրելի չեն: Բացի այդ, մշտադիտարկման նպատակով կիրառվող հաշվետվությունները նկարագրողական են, հիմնականում ներկայացված են կազմակերպական աշխատանքները, դրանք, ընդհանուր առմամբ չեն ներառում որակական վերլուծություններ, համապատասխան գնահատականներ, ընդգծված չեն բարելավման ենթակա արդյունքները: Արդյունքում, ամբողջությամբ վտանգված է ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի արդյունավետությունը և դրա գնահատումը:

ՄՈՒՀ-ը պարբերաբար իրականացնում է ուսուցման որակի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բացահայտում, նաև կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն՝ ուսումնական գործընթացն ապահովելով անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, ինչը դրականորեն է անդրադառնում ուսումնական գործընթացի արդյունավետության վրա: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում գործունեության վրա ազդող գործոնների տվյալների հավաքագրման և վերլուծությունների մեխանիզմները հստակ չեն, դեռևս հարցումներ չեն կատարվում գործատուների, դասախոսների և շրջանավարտների շրջանակներում, ինչը կարող է խոչընդոտել ներքին և արտաքին շահակիցների կրթական կարիքների վերհանմանը:

Քանի որ ԱՊՔ-ում կառավարչական գործընթացները համակարգող փաստաթղթերը ձևավորվել են հիմնականում 2018թ.-ից, ուստի որակի կառավարման պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում փուլերի իրականացումը և հաշվետվողականությունը դեռևս տեսանելի չէ: Խնդրահարույց է, որ թեկուզ կարճաժամկետում, առկա չեն կատարաման արդյունքները, գնահատականները: Ամփոփումներ և համապատասխան գնահատականներ առկա չեն նաև ԱՊՔ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված քայլերի կատարման համար: Արդյունքում վտանգված է որակի կառավարման սկզբունքը՝ պլանավորում, իրականցում, գնահատում, բարելավում պարբերաշրջանը հստակ ամփոփումներ չունի, հստակ առանձնացված չեն բարելավման ենթակա խնդիրները՝ խոչընդոտելով ուսումնական և կառավարման գործընթացների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ գործող կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տեղակայված է ԱՊՔ-ի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչը կարող է նպաստել իրազեկվածության բարձրացմանը, դիմորդների թվաքանակի ավելացմանը: Անհանգստացնող է, որ շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջական չէ, ինչը կարող է ամբողջական պատկերացում չտալ շրջանավարտների հաջողությունների մասին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում բացակայում են հաստատության առաքելությանն ու նպատակներին համապատասխան երկարաժամկետ, կարճաժամկետ պլանավորման իրականացման և մշատադիտարկման, ՄԿԾ-երի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող հստակ մեխանիզմները, քաղաքականությունների և վարչարարության իրականացման որակի կառավարման սկզբունքը գրեթե չի գործում, ինչպես նաև, ընդհանուր առմամբ բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին քանակական և որակական տեղեկատվությունը գնահատող մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարար չափով չի ապահովում հաստատության առաքելության և նպատակների իրականացմանը միտված կառավարման համակարգի և վարչարարության արդյունավետությունը, ուստի չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ ԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Ըստ կանոնադրության և առաքելության՝ ԱՊՔ-ի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը: Նաև Ինքնավերլուծությում նշվում է, որ ՄՈՒՀ-ը, որպես միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական)

կրթություն տրամադրող մասնագիտացված քոլեջ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված արհեստագործական, տնտեսագիտական, մանկավարժական, տեղեկատվական տեխնոլոգիաների, սպասարկման ոլորտի մասնագիտությունների գծով առաջարկում է կրթական ծրագրեր (նաև կարճաժամկետ լրացուցիչ): Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը պատրաստում է նաև միջին մասնագետներ գինեգործության, դեղագործության, կոսմետիկա և դիմահարդարման արվեստի, համակարգչային գեղարվեստական նախագծման, հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման ոլորտներում. այս ուղղությունները ներառված չեն ԱՊՔ-ի կանոնադրության և առաքելությունների մեջ:

Ըստ Ինքնավերլուծության՝ ԱՊՔ-ն իր առջև խնդիր է դրել պատրաստել բարձր որակավորման կարողություններով և հմտություններով օժտված, ներկա աշխատաշուկային համապատասխան մասնագետներ: Այդ առումով առաջնորդվում է այնպիսի ՄԿԾ-ներով, որոնք ուսումնաարտադրական մոդուլների պայմաններում միտված են ժամանակակից տնտեսության պահանջարկին համապատասխան մասնագետների պատրաստմանը՝ տալով հիմնավոր ու որակյալ միջին մասնագիտական և արհեստագործական կրթություն: Փորձագիտական առցանց այցի արդյունքում պարզ դարձավ, որ առկա է «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների գծով գործնական հմտությունների ապահովման խնդիր, Պետական կրթական չափորոշչով (Այսուհետ՝ ՊԿՉ) սահմանված զբաղմունքի նկարագրով առաջարկված շրջանակում (գլուխ 2) «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությամբ պրակտիկայի վայրերը սակավ են (ուսանողները պրակտիկան անցկացնում են բանկում, խանութներում, կահույքի խանութում, զբոսաշրջային ոլորտի գործընկեր կազմակերպություններ չկան): Նաև պարզ դարձավ, որ աշխատանքի ընդունելիս գործատուները պահանջում են հաշվապահական ծրագրերի, օրինակ՝ ՀԾ-ի իմացություն, բանկային ոլորտում գործնական հմտություններ, որոնք ներառված չեն ԱՊՔ-ի «Հաշվապահական հաշվառում», «Ֆինանսներ» ՄԿԾ-ների մոդուլներում:

«Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են ՊԿՉ-ներին և մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների: Ուսումնասիրվող մասնագիտությունների մոդուլային ծրագրերը (Այսուհետ՝ ՄԾ) համապատասխանում են ՊԿՉ-ի պահանջներին: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Ֆինանսներ» ՄԿԾ-ի նպատակները հիմանականում ունեն ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի ձևակերպումներ, ՄԿԾ-ով սահմանված նպատակները ՄԾ-ով ակնկալվող արդյունքների հետ համադրելի չեն:

Ըստ ԱՊՔ-ի կոլեգիալ կառավարման խորհրդի կանոնակարգի 22-րդ կետի՝ խորհուրդը քննարկում է մոդուլային/առարկայական ծրագրերի նախագծերը, վավերացնում է դրանք: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք չեն վավերացվել Խորհրդի կողմից («Կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման ուղեցույց», Ա. Սահրադյան, Երևան 2015 թ., էջ 156):

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզվեց, որ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների գծով մասնագիտական մոդուլներում առկա են թեմատիկ համընկնումներ: Համընկնումներ են առկա նաև տրամադրվող հանձնարարականների, ինքնուրույն աշխատանքների, ռեֆերատների, զեկույցների թեմաների մեջ: Համավարակի պայմաններում առցանց կրթություն կազմակերպելու արդյունքում հետաձգվել են նախաավարտական և ուսումնաարտադրական պրակտիկաների մեծ մասը: Այցից պարզ դարձավ, որ միջոցառումներ են ձեռնարկվել առցանց տարբերակով լրացնել գործնական հմտությունները:

ԱՊՔ-ում ուսումնասիրվող մասնագիտությունների («Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում») գծով դասավանդվող մասնագիտական մոդուլների ընտրանքը մեծ է (ըստ ՊԿՉ-ների՝ 49 մոդուլ), և փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ՝ մեկ դասախոսը դասավանդում է երեք մասնագիտությունների գծով տարբեր մասնագիտական մոդուլներ: Այցի ընթացքում պարզվեց, որ որոշ մոդուլներում առկա է ինքնուրույն մտածողությունը և վերլուծական միտքը զարգացնող հաձնարարություններ, այդուհանդերձ, առկա լավ փորձը տարածելի չէ (օրինակ՝ «Ձեռներեցություն» մոդուլից՝ բիզնես պլանների կազմում, «Մարքեթինգային հմտություններ» մոդուլից՝ մերչնդայզինգի ուսումնասիրություններ, «Կոնֆլիկտների, սթրեսների և փոփոխությունների կառավարում» մոդուլից՝ դերային խաղ, որը վերաբերում է կազմակերպությունում առկա փոփոխություններին):

Ըստ Ինքնավերլուծության՝ կրթական բոլոր ծրագրերում ներառված են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ, որոնց կիրառումը քննարկվում է ամբիոններում, մեթոդխորհրդում, սակայն այցից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ում ՄԿԾ-ներից ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը հստակ չի գործում: Այցից պարզ դարձավ, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների կապը ուսումնառության արդյունքների հետ թույլ է, բացակայում են ուսումնառությանը խթանող նորագույն մեխանիզմները, որոնք ամրագրված են ՁԾ-ի ռազմավարական նպատակներից բխող խնդիրներում: Բացի դա, ուսումնասիրվող մասնագիտությունների գծով առկա չեն դասավանդման միասնական մոտեցումներ:

2015-2016 ուսումնական տարվանից ԱՊՔ-ն անցել է 10 միավորանոց գնահատման համակարգի, անցողիկը՝ 4 միավոր: Ուսանողների գնահատման համար մշակվել է «Ուսանողների գնահատման, բողոքարկման, հաճախումների և մատենավարման կարգ», «Ուսանողների բողոքների դիտարկման կանոնակարգ», «ԱՊՔ-ում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգ», «Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն» փաստաթղթերը: Այդուհանդերձ, «Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն» փաստաթղթում բացակայում են գրագողության դեմ պայքարի մեխանիզմները, առկա են միայն դրա բացատրությունը և հետևանքները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ընկալելի դարձավ, որ ՄԾ-ների գնահատման միջոց բաժնում հստակեցված չէ, թե արդյունքները կոնկրետ ինչ առաջադրանքի(թեստ,հակիրճ զեկույց, գործնական աշխատանք, հարց ու

պատասխան)կատարման դեպքում են համարվում անցած: Հիմնականում գնահատումն իրականացվում է թեստերի միջոցով, որոնցում տարբերակված չեն տեսականի և գործնականի բաղադրիչները[6]:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ները և դասախոսների կողմից կազմված ՄԾ-ները չեն համադրվում այլ ՄՈՒՀ-երի համապատասխան ՄԿԾ-ների և ՄԾ-ների հետ, ուստի ուսանողների և դասախոսների շրջանում բացակայում է շարժունությունը: Պարզվեց նաև, որ ՄԿԾ-ները և ՄԾ-ները կազմելիս դասախոսներն օգտվել են ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱԱՀ-ի բուհական ծրագրերից: Բացի դա, ՄԿԾ-ները չեն ենթարկվում մշտադիտարկման, առկա չեն բարելավման մոտեցումներ, վերջին տարիներին ՄԾ-ները հիմնականում չեն վերանայվել: Դասալսումների արդյունքների ամփոփումը ներդրված չէ ՄԾ-ների բարելավման գործընթացներում: ՄԿԾ-ների մշակման գործընթացում գործատուները չունեն ընդգծված մասնակցություն, ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ հարցումներ նաև չեն անցկացվել ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Դասալսումների և առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մասնագիտական դասընթացներին ստանում են հիմնականում տեսական բնույթի գիտելիքներ, գործնական հմտություններ տրամադրելու ուղղությամբ գրեթե աշխատանքներ չեն տարվում: Բացի դա, գործատուները ևս փաստում են, որ անհրաժեշտ գործնական հմտությունները բավարար չեն աշխատանքի ընդունման համար, պահանջում են հաշվապահական ծրագրերի, օրինակ՝ ՀԾ-ի իմացություն, բանկային ոլորտում՝ գործնական հմտություններ:

Դատողություններ: Թեև ըստ կանոնադրության և առաքելության՝ ԱՊՔ-ի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական, մանկավարժական և սպասարկման կրթության իրականացմանը, սակայն ՄՈՒՀ-ում գործում են նաև հետևյալ միջին մասնագիտական կրթական ծրագրերը՝ «Գինեգործություն», «Դեղագործություն», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», որոնք արտացոլված չեն ԱՊՔ-ի կանոնադրության և առաքելությունների մեջ: Այն կարող է խոչընդոտել ՄԿԾ-ների և առաքելության համապատասխանության ապահովմանը:

Մտահոգիչ է, որ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների գծով առկա է գործնական հմտությունների ապահովման խնդիր, «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությամբ պրակտիկայի վայրերը սակավ են, զբոսաշրջային ոլորտի գործընկեր կազմակերպություններ չկան: Գործատուները ևս փաստում են, որ անհրաժեշտ գործնական հմտությունները բավարար չեն աշխատանքի ընդունման համար, պահանջում են հաշվապահական ծրագրերի, օրինակ՝ ՀԾ-ի իմացություն, բանկային ոլորտում գործնական հմտություններ:

Քանի որ «Ֆինանսներ» ՄԿԾ-ի նպատակները հիմանականում ունեն ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի ձևակերպումներ, ՄԿԾ-ով սահմանված նպատակները ՄԾ-ով ակնկալվող արդյունքների հետ համադրելի չեն, բացի այդ, ուսումնասիրված ՄԾ-ներում օգտագործված գրականության ցանկը բուհական է, ուստի վտանգվում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի ապահովումը:

---

[6] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

Անհանգստացնող է, որ ՄԾ-ները չեն վավերացվում ԱՊՔ-ի կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից, արդյունքում վտանգվում է կառավարչական որոշումների արդյունավետությունը և դրանց նկատմամբ վերահսկողությունը:

Խնդրահարույց է, որ ուսումնասիրվող մասնագիտությունների գծով մասնագիտական մոդուլներում առկա են թեմատիկ համընկնումներ: Տրամադրվող հանձնարարականների, ինքնուրույն աշխատանքների, ռեֆերատների, զեկույցների թեմաների մեջ նույնպես կան համընկնումներ, ինչը կարող է վտանգել ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը և ՈԱՇ-ի իրականացումը:

Թեև համավարակի պայմաններում, առցանց կրթություն կազմակերպելու արդյունքում հետաձգվել են նախաավարտական և ուսումնաարտադրական պրակտիկաների մեծ մասը և պրակտիկայի ղեկավարները առցանց տարբերակով փորձել են լրացնել գործնական հմտությունները, այդուհանդերձ, ակնկալվող արդյունքը չի ապահովվել ամբողջությամբ՝ վտանգելով գործնական հմտությունների ձևավորումը և ՄԿԾ-ների վերջնարդյունքների ապահովումը:

Քանի որ ԱՊՔ-ում ուսումնասիրվող մասնագիտությունների («Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում» և «Սպասարկման կազմակերպում») գծով դասավանդվող մասնագիտական մոդուլների ընտրանքը մեծ է (ըստ ՊԿՉ-ների՝ 49 մոդուլ), և մեկ դասախոսը դասավանդում է երեք մասնագիտությունների գծով տարբեր մասնագիտական մոդուլներ, ուստի վտանգվում է մասնագիտական դասընթացների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ որոշ մասնագիտական մոդուլների հանձնարարությունները ինքնուրույն մտածողությունը և վերլուծական միտքը զարգացնող են, այդուհանդերձ, ձևավորված լավ փորձը տարածելի չէ, ինչը կարող է խոչընդոտել ՈԱՇ-ի իրականացմանը:

Քանի որ ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ներից ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը հստակ չի գործում, վտանգվում է դասավանդման և ուսումնառության մեթոդների կապը ուսումնառության արդյունքների հետ: Բացի այդ, բացակայում են ԶԾ-ում, որպես խնդիր ներառված, ուսումնառությանը խթանող նորագույն մեխանիզմները, ուսումնասիրվող մասնագիտությունների գծով առկա չեն դասավանդման միասնական մոտեցումներ: Անհանգստացնող է, որ ՄԿԾ-ների արդյունքի գնահատման միջոցները հստակեցված չեն, բացակայում է գնահատականի հիմնավորումը, ինչի հետևանքով ուսանողների գնահատականների օբյեկտիվությունը կարող է կասկածի տակ դրվել: Արդյունքում վտանգվում է ՄՈՒՀ-ի գնահատման համակարգի արդյունավետությունը, կապը վերջնարդյունքի հետ[7]:

Բավականաչափ խնդրահարույց է, որ ՄԿԾ-ները և դասախոսների կողմից կազմված ՄԾ-ները չեն համադրվում այլ ՄՈՒՀ-երի համապատասխան ՄԿԾ-ների և ՄԾ-ների հետ, ավելին՝ ՄԿԾ-ները և ՄԾ-ները կազմելիս դասախոսներն օգտվել են ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱԱՀ-ի բուհական ծրագրերից: Արդյունքում վտանգվում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի ապահովումը:

[7] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

Քանի որ ՄԿԾ-ները չեն ենթարկվում մշտադիտարկման, վերջին տարիներին ՄԾ-ները հիմնականում չեն վերանայվել և բարելավման մոտեցումներ առկա չեն, ուստի դասալսումների արդյունքների ամփոփումը ներդրված չէ ՄԾ-ների բարելավման գործընթացներում, ՄԿԾ-ների մշակման գործընթացում գործատուները չունեն ընդգծված մասնակցություն, ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ հարցումներ չեն անցկացվել ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Արդյունքում՝ ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմները չեն գործում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ում ընդհանուր առմամբ ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը հստակ չէ, ՄԿԾ-ները և ՄԾ-ները համադրելի չեն այլ ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների և ՄԾ-ների հետ, նպատակադրումները որոշակի առումներով համընկնում են ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի ձևակերպումներին, ՄՈՒՀ-ում ուսանողների ստացած գործնական հմտությունները չեն բավարարում աշխատաշուկայի պահանջները՝ վտանգելով միջին մասնագետներ պատրաստելու ՄՈՒՀ-ի առաքելությունը, ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմները չեն գործում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն չի բավարարում չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ԱՊՔ-ում առկա է ընդունելության կանոնակարգ, գործում է ուսանողների հավաքագրման ու ընդունելության կարգ առնվազն հիմնական կրթություն ունեցող անձանց դիմումներով: Ըստ Ինքնավերլուծության՝ ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով, իսկ ոլորտային մասնագիտությունների(դեղագործություն)դեպքում՝ մասնագիտական քննությունով: Ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված Արհեստագործական և Միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ն ուսանողների հավաքագրմանը միտված համագործակցում է դպրոցների հետ, մասնավորապես, այցելում է տարածաշրջանի դպրոցներ՝ այցերի ընթացքում ներկայացնելով ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունները: Պարբերաբար կազմակերպվում են բաց դռների օրեր, ծնողների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում ևս ներկայացվում են ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունները: Առկա են նաև մասնագիտությունների ցանկը ներկայացնող թռուցիկներ:

ԱՊՔ-ի պաշտոնական կայքէջը համեմատաբար նոր է և առկա է դիմորդների ընդունելության միայն 2020-2021 ուսումնական տարվա ուղեցույցը, կայքում սակավ են մասնագիտական կողմնորոշմանը վերաբերող նյութերը: Գործում է նաև ՄՈՒՀ-ի մի քանի ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվել են ինչպես ընդունելության կարգը, այնպես

էլ հրապարակվել են ընդունելության ավարտին ձևավորված ուսանողների ցանկը՝ ըստ կուրսերի: Այցից պարզ դարձավ, որ 2020 - 2021 ուսումնական տարում դիմորդների թվի աճ է գրանցվել, և վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների առկայությունը ձևավորել է այս տարվա արտաբյուջեն 8,500,000 դրամով:

ԱՊՔ-ում առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման ընթացակարգեր, «Ուսանողների օգնության հատկացման կարգ» փաստաթուղթը, որի համաձայն կատարվում են հատուկ կարիքներ ունեցող վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների վարձավճարների լրիվ կամ մասնակի փոխհատուցում: Ըստ Ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ի գործունեությունը գնահատելու համար ուսանողներին տրամադրվում են հարցաթերթիկներ, սակայն փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ հարցաթերթիկների վերլուծությունները և դրանցից դուրս բերված կարիքների գնահատման գործընթացը շարունակական բնույթ չի կրում, ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ առկա չեն: ՈւԽ-ն ցուցաբերում է քիչ ներգրավվածություն ուսանողների կարիքների վերհանման գործընթացում:

ԱՊՔ-ում գործում է մանկավարժ-հոգեբանի և իրավախորհրդատուի հաստիք: Այցից պարզ դարձավ, որ մանկավարժ-հոգեբանը պարբերաբար զրույցներ է վարում ուսանողների հետ՝ փորձելով հասկանալ նրանց խնդիրները, իսկ իրավախորհրդատուի գործառույթների շրջանակը հստակեցված չէ: Գործում է նաև Կուրսղեկական խորհուրդ, ինչպես նաև ընդգծված են կուրսղեկների գործառույթների շրջանակը և փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում առաջացող խնդիրները հիմնականում լուծվում են կուրսղեկների միջնորդությամբ: Լրացուցիչ պարապմունքների մեխանիզմները հստակ չեն, սակայն դասախոսների կողմից տրամադրվում է լրացուցիչ աջակցություն ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին: Կուրսղեկները տրամադրում են նաև լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն:

ԱՊՔ-ում գործում է Կարիերայի ստորաբաժանում, որն ունի մշակված կանոնակարգ և աշխատանքային պլան: Ըստ Ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ում առկա է Կարիերայի կենտրոնի կողմից պրակտիկաների անցկացման մասին խորհրդատվություն տրամադրելու ընթացակարգ, սակայն առցանց այցից պարզ է, որ ուսանողները չունեն ներգրավվածություն պրակտիկաների խորհրդատվությունների համակարգում: Առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ շրջանավարտների հետ հետադարձ կապը թույլ է, և շրջանավարտ-ՄՈՒՀ կապը հիմնականում ապահովվում է դասախոսների միջոցով: Կարիերայի կենտրոնի կողմից շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ և վերլուծություններ չկան: Այցից նաև պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման մեխանիզմները հստակ չեն աշխատում:

Ուսանողների կողմից վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց առկա չէ, սակայն այցից պարզ է, որ ուսանողների կողմից բարձրացրած խնդիրներին վարչական անձնակազմը արձագանքում է: Խնդիրները վերաբերում են վարձավճարներին, առցանց կրթության պայմաններում կապի ապահովմանը, բացակայություններին:

ԱՊՔ-ում ուսանողներին վերլուծական աշխատանքներում մասնակցությունը դրսևորվում է ռեֆերատների, ինքնուրույն գործնական աշխատանքների ու հանձնարարությունների տեսքով: «Սպասարկման կազմակերպում», «Ֆինանսներ»

մասնագիտությունների գծով հանձնարարականներում առկա են վերլուծական բաղադրիչներ, մյուս մասնագիտությունների գծով՝ առկա չեն:

Որպես առանձին կառույց ՄՈՒՀ-ում գործում է ՈՒսանողական խորհուրդը (ՈՒԽ), որն ունի մշակված կանոնադրություն: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի գործառույթները, որոնք վերաբերում են ուսանողների իրավունքների պաշտպանությանը, հստակ ընդգծված չեն,ուսանողների խնդիրները բարձրաձայնելու քայլերը գործուն չեն, մինչդեռ ՈՒԽ-ը ներգրավված է բացակաների ու ուշացումների վերահսկման գործընթացում և դրանց մասին տեղեկատվությունը ներկայացնում է տնօրինությանը:

ԱՊՔ-ի և ուսանողի միջև կնքվում է պայմանագիր, որտեղ ներառված են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն այցից պարզ է, որ ուսանողները ոչ լիարժեք են տիրապետում իրենց իրավունքներին ու պարտականություններին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ԱՊՔ-ում ուսանողների հավաքագրմանը միտված տարբեր դպրոցների հետ համագործակցությունն ու բաց դռների օրերի կազմակերպումը, ինչը կարող է նպաստել ուսանողների թվի աճին: Քանի որ դիմորդների համար ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում տրամադրվող մասնագիտական բնույթի տեղեկատվությունը սակավ է, փորձագիտական խումբը գտնում է, որ այն կարող է հանգեցնել նրանց կողմից ընտրվող մասնագիտության ոչ լիարժեք ընկալմանը: Դրական է դիտվում վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների թվի աճը, որը հանգեցրել է ԱՊՔ-ի արտաբյուջեի ավելացմանը: Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին դասախոսների կողմից տրամադրվող աջակցությունը և ուսանողների բարձրացրած խնդիրներին վարչական անձնակազմի արձագանքը կարող է նպաստել ուսանողների առաջընթացի ապահովմանը:

Դրական է դիտվում, որ իրականացվում են հարցումներ, բայց, քանի որ դրանց վերլուծություններն ու արդյունքների դուրս բերումը շահակիցներին չեն ներկայացվում, ինչպես նաև վեր հանված խնդիրների բարելավմանն ուղղված քայլեր չեն կատարվում, փորձագիտական խումբը գտնում է, որ դա կարող է հանգեցնել ուսանողների կրթական կարիքների ոչ լիարժեք վերհանմանը: Հատկանշական է, որ կուրսղեկները ներգրավված են կրթական կարիքների վերհանման գործընթացում, ինչպես նաև ընդգծված են մանկավարժ-հոգեբանի գործառույթների շրջանակն ու ուսանողների հետ պարբերական հանդիպումները, որը կարող է նպաստել դաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Թեև ՄՈՒՀ-ում գործում է ՈՒԽ, այդուհանդերձ, ՈՒԽ-ի թերի ներգրավվածությունը ուսանողների կարիքների վերհանման և ուսանողների շահերի պաշտպանության գործընթացում կարող է հանգեցնել ՈՒԽ-ի նկատմամբ անվստահությանը: Քանի որ շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները թույլ են, ուստի դա կարող է խոչընդոտ հանդիսանալ ՄՈՒՀ-գործատու կապի ամրապնդման գործում՝ վտանգելով կրթական ոլորտում շարունակական բարելավումները:

Փորձագիտական խումբը դրական է համարում՝ ԱՊՔ-ում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների առկայությունը. որոշ մասնագիտությունների գծով հանձնարարականները վերլուծական բաղադրիչներ են պարունակում, ինչը կարող է դրականորեն անդրադառնալ ուսանողների

վերլուծական մտածողության զարգացման վրա: Քանի որ ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման մեխանիզմները հստակ չեն աշխատում, ապա կարող է վտանգվել ուսանողների կարիքների բարելավումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ում գործում է ուսանողների հավաքագրման, ընտրության ու ընդունելության կարգ, առկա են կրթական կարիքների վերհանման ընթացակարգեր, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին դասախոսների կողմից տրամադրվում է աջակցություն, ուսանողն ազատ է ցանկացած պահին դիմելու վարչական անձնակազմին, գործում է ՈՒԽ, ուսանողներն իրենց խնդիրները կարողանում են լուծել կուրսղեկների միջոցով, ուստի, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է չափանիշ 4 - ի պայմաններին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 4**-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: ԱՊՔ-ում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համար մշակվել են «Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ», «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթերը: Ըստ «Աշխատանքի ընդունման և հեռացման կանոնակարգ»-ի՝ աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կամ աշխատանքային պայմանագիրը և անհատական իրավական ակտը միաժամանակ ընդունելով, իսկ ըստ «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթի և Ինքնավերլուծության՝ դասախոսների և վարպետների ընդունելությունը իրականացվում է բաց մրցույթով՝ նախօրոք հայտարարված թափուր հաստիքի հրավերով:

2018 թ-ից բոլոր քոլեջներում ներդրվել է «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ որոշ դեպքերում աշխատանքի են ընդունել դասախոսի և արտադրական ուսուցման վարպետի՝ հրավիրելով իրենց շրջանավարտին կամ ուղղակի ներկայացված CV-ների հիման վրա, ըստ ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված հարցաշարի՝ չկիրառելով մրցութային կարգը:

Դասախոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են տվյալ ՄԿԾ-ներին համապատասխանող ՊԿՉ-ում, ըստ որի քոլեջում դասավանդող մասնագետներն ունեն համապատասխան բազային կրթություն և փորձ: ՄՈՒՀ-ում առկա չեն դասախոսներին ներկայացվող մասնագիտական հստակ պահանջներ:

Դասախոսական անձնակազմի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները ներկայացված են դասախոսի աշխատանքային

պայմանագրում և «ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ մանկավարժական աշխատողների իրավասությունների և գործունեության» կանոնակարգում: Ըստ Ինքնավերլուծության՝ ԱՊՔ-ում դասախոսների, վարպետների մասնագիտական որակների գնահատումն իրականացվում է բաժնի վարիչների, փորձառու դասախոսների դասալսումների վերլուծությունների և ուսանողների կարողությունները ուսումնասիրելու միջոցով: Դասալսումների արդյունքներն ամփոփվում և վերլուծվում են ոչ միայն դասալսումների մատյաններում, այլ նաև քննարկվում են, նշվում առավելությունները, արդյունավետության մակարդակը, ընդգծվում թերությունները: Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման ընթացակարգերից է ուսանողական հարցումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացված հարցումների արդյունքների քննարկումներ և վերլուծություններ չեն իրականացվել:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ուսումնական մասի գործունեությունը միտված է դասախոսների մասնագիտական աճին, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ըստ «ԱՊՔ ՈՒսումնական մասի 2019-2020թթ. զարգացման ծրագիր» փաստաթղթի՝ նախատեսվում է իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստումներ, հետևել դասախոսների անհատական թույլատրելի ծանրաբեռնվածությանը, իրականացնել դասալսումներ՝ խթանելով սկսնակ դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացումը, նպաստել դասախոսների վերապատրաստմանը՝ էլեկտրոնային եղանակով աշխատելուն, առաջավոր մանկավարժական փորձը հասանելի դարձնել սկսնակ դասախոսներին:

ԱՊՔ-ն իր դասախոսական անձնակազմի կատարելագործման համար առաջնորդվում է «Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կանոնակարգ»-ով, ըստ որի մանկավարժ աշխատողների համար պարտադիր է հինգ տարին մեկ վերապատրաստվելը:«Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կանոնակարգ»-ին համապատասխան ՄՈՒՀ-ի դասախոսների վերապատրաստումը պարտադիր է և անցկացվում է՝ ըստ տնօրենի ներկայացրած հայտի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում վերապատրաստվում է ԱՊՔ-ի դասախոսների և վարպետների մոտ 15-20%-ը: Տնօրենը, տվյալ տարվա մինչև հունվարի 30-ը ներառյալ մանկավարժական աշխատողների 20%-ի անվանացանկը (զբաղեցրած պաշտոնը, կոնտակտային տվյալները) ներկայացնում է վերապատրաստող կազմակերպություն՝ ՄԿՈՒԶԱԿ: Այցից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ի կողմից կազմակերպված մասնագիտական վերապատրաստումներին մասնակցել են քիչ թվով դասախոսներ, մասնավորապես՝ վերապատրատվել են «Հաշապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների դասախոսները:

ԱՊՔ-ի դասախոսական կազմը գրեթե ներգրավված չէ հետազոտական աշխատանքներում, և ըստ 2019-2020 ուստարվա «Ներքին գնահատման հաշվետվության» դասախոսներից ընդամենը մեկն է իրականացրել հետազոտական բնույթի աշխատանք՝ տպագրվելով միջազգային և հանրապետական պարբերականներում:

Աշխատակիցների խրախուսման համար ԱՊՔ-ում 2018 թ-ից մշակվել է «ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմներ» կանոնակարգը, ըստ որի աշխատանքային պարտականությունները բարեխիղճ, պատշաճ կատարելու համար գործատուն (քոլեջի տնօրենը) կարող է կիրառել խրախուսանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ շնորհակալության հայտնում, հուշանվերով կամ պատվոգրով պարգևատրում, միանվագ դրամական պարգևատրում, կարգապահական տույժի

հանում, օրենքով նախատեսված դեպքում և կարգով քոլեջի մանկավարժ աշխատողներին պետական պարգևների ներկայացում: Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսները պարգևատրվել են պատվոգրերով, դրամական խրախուսում չեն ստացել:

ԱՊՔ-ում 2020-2021 ուստարում աշխատում է 40 հիմնական և 1 համատեղությամբ դասախոս: Փորձագիտկան առցանց հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերից է դասախոսական անձնակազմը: Միևնույն ժամանակ պարզվեց, որ դասախոսներից մի քանիսը («Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը՝ ըստ որակավորումների 2020-2021») միաժամանակ դասավանդում են 5-ից ավել մասնագիտական մոդուլներ, որոնք որոշ դեպքում մասնագիտական բնույթով տարբեր են:

ԱՊՔ-ն չունի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, սակայն ունի երիտասարդ և միջին տարիքի անձնակազմ, երիտասարդ կադրերի առաջխաղացման հստակ ուղղվածություն: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի սկսնակ դասավանդողների հետ տարվող աշխատանքներն իրականացվում են ամբիոններում և ուսումնական մասում, ստեղծված է բարենպաստ միջավայր ավագ և փորձառու դասախոսների կողմից սկսնակ դասախոսներին փորձի փոխանցման համար:

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ իր ռազմավարական նպատակներն իրականացնելու համար: Ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի ընտրության համար չկա հատուկ ընթացակարգ: Ուսումնաօժանդակ աշխատողները աշխատանքի են ընդունվում իրենց դիմումի համաձայն: Վարչական աշխատողներին նշանակում է տնօրենը՝ հաշվի առնելով վերջիններիս մասնագիտական որակները: ԱՊՔ-ում մշակվել են ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի որոշ պաշտոնների պաշտոնի նկարագրեր:

Դատողություններ: Թեև 2018 թ-ից բոլոր քոլեջների համար գործում է «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ը, սակայն այցից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ում դասախոսներն ու արտադրական ուսուցման վարպետներն աշխատանքի են ընդունվում ոչ մրցութային կարգով, ինչը կարող է խոչընդոտել կադրերի ընտրության արդյունավետությանը:

Թեև ՄՈՒՀ-ը դասախոսների մասնագիտական որակների համար չունի հստակ սահմանված պահանջներ, աշխատանքի ընդունման հիմքում մրցութային կարգը դրված չէ, այդուհանդերձ դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները բխում են տվյալ մասնագիտության ՊԿՉ-ի 5-րդ գլխից: Արդյունքում չի խախտվում ՊԿՉ-ի պահանջը, սակայն կարող է վտանգվել ՄՈՒՀ-ի քաղաքականությունը դասախոսների ընտրության հարցում:

Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել դասախոսների գնահատման ուսանողական հարցումների ընթացակարգի ներդրմանը, որի պարբերաբար իրականացումը դրական ազդեցություն կունենա կրթական կարիքների վերհանման և բացահայտված խնդիրների լուծման համար: Միևնույն ժամանակ, փորձագիտական խմբի դիտարկմամբ, այս ընթացակարգի կիրառումը կարող է խթանել ուսանողների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը:

Դասախոսական անձնակազմը մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող տարեկան պլանային վերապատրաստումներին, այդուհանդերձ, ԱՊՔ-ի կողմից մասնագիտական վերապատրաստումներին մասնակցել են քիչ թվով դասախոսներ,

ինչը կարող է խոչընդոտել դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների առաջընթացին:

Չնայած՝ ԱՊՔ-ն ունի անձնակազմի խրախուսման որդեգրած քաղաքականություն (ՄՈՒՀ-ում դրսևորվում է պատվոգրեր շնորհելու ձևով), սակայն խրախուսման համակարգի հստակ դրսևորումներ առկա չեն՝ վտանգելով անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը:

Հատկանշական է, որ ԱՊՔ-ն ունի 40 հիմնական աշխատող դասախոս և մեկ համատեղող, գործատու դասախոսներ ներգրավված չեն: Բացի այդ դասախոսների տարիքային կազմը երիտասարդ է: ԱՊՔ-ն համալրված է մանկավարժական փորձ ունեցող, երիտասարդ և հետաքրքիր մոտեցումներով օժտված դասախոսներով, միևնույն ժամանակ, պրակտիկ դասավանդողներով անձնակազմի համալրումը կնպաստի ԱՊՔ-ի ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների ավելացմանը: Մտահոգիչ է, որ որոշ դասախոսներ միաժամանակ դասավանդում են 5-ից ավել մասնագիտական մոդուլներ, որոնք որոշ դեպքում մասնագիտական բնույթով տարբեր են, ինչը կարող է վտանգել դասընթացի արդյունավետությունը և կայունությունը:

Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ի դասախոսները, ըստ ՈԱ հանձնաժողովների, հիմնականում ներգրավված են ՈԱ գործընթացներում, մասնակցել են Ինքնավերլուծությանը, բաց են քննարկումների համար, ընդհանուր առմամբ խնդիրները վերհանող են, ինչը կարող է նպաստել ԱՊՔ-ի դասախոսական կազմի ներուժի օգտագործմանը և ՈԱ գործընթացների լավարկմանը:

Թեև ՄՈՒՀ-ում առկա են աշխատանքի ընդունման տարբեր ընթացակարգեր, այդուհանդերձ, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության ընթացակարգի բացակայությունը կարող է խոչընդոտել վերջիններիս ընտրության արդյունավետությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ իր առաքելության և նպատակների իրականացման համար ԱՊՔ-ն ունի կայուն պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական գործունեության նկատմամբ որոշակիորեն հստակեցված պահանջներ, մասնագիտական ներուժ, երիտասարդ անձնակազմ, երիտասարդ կադրերի առաջխաղացման հստակ ուղղվածություն, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ԱՊՔ-ի փաստաթղթերն ուսումնասիրելիս փորձագիտական խումբը պարզեց, որ ՄՈՒՀ-ն ունի մշակված «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագիր», որտեղ հստակ սահմանված չէ, թե ինչ է հետազոտությունը, նաև հստակ ձևակերպված չեն ԱՊՔ-ի հետազոտության ոլորտի նպատակները և այդ նպատակներին հասնելու ռազմավարական քայլերի հաջորդականությունը: «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագով» տարանջատված չեն

երկարաժամկետ ռազմավարությունը և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները: ԱՊՔ-ի կողմից ներկայացվել է հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեմա, սակայն փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն այն չի կիրառում հետազոտական ոլորտում: Փորձագիտական խումբը նաև պարզեց, որ ԱՊՔ-ում հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականությունը մշակված չէ, որի օգնությամբ կապահովվի հետազոտությունների իրականացումը և ՄՈՒՀ-ի զարգացումը:

ԱՊՔ-ի կողմից մշակված «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագում» կարևորվում է ոչ միայն տեղական հետազոտական փորձի ուսումնասիրությունը, այլ նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԱՊՔ-ի կողմից չի խրախուսվում թե՛ տեղական հետազոտական գործունեությունը, թե՛ հետազոտական գործունեության միջազգայնացումը: ԱՊՔ-ում դասավանդող միայն մեկ դասախոս ունի միջազգային և հանրապետական պարբերականներում հրատարակած 2 հոդված:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ուսանողները հետազոտական աշխատանքներ իրականացնում են առանձին մոդուլների, առարկաների, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների շրջանակներում: Մինչդեռ՝ այցից պարզվեց, որ ուսումնական և նախաավարտական պրակտիկաների հաշվետվությունները չեն պարունակում վերլուծական տարրեր, որպես վերլուծություն ներկայացված բիզնես պլանների մեծ մասը կրկնում են միմյանց, ուսանողները դասախոսների և գործատուների կողմից հիմնականում չեն ստանում վերլուծություններ պարունակող առաջադրանքներ, ուսանողները և գործատուները չունեն համատեղ հետազոտական աշխատանքներ, դասախոսական կազմը չի իրականացնում փորձի փոխանակում և տարածում: Այնուհանդերձ, որոշ մասնագիտություններում ուսանողների հանձնարարականները պարունակում են վերլուծական տարրեր:

Դատողություններ: Քանի որ ԱՊՔ-ի «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագրում» ՄՈՒՀ-ի նպատակները և քայլերի հաջորդականությունը հստակ ձևակերպված չեն, ուստի ԱՊՔ-ում հետազոտությունների իրականացման քաղաքականությունը հստակ չի դրսևորվում: Արդյունքում վտանգվում է ուսանողների և դասախոսների մոտ վերլուծական մտածողության զարգացումը և, ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ի հետազոտական ոլորտի զարգացումը:

Մտահոգիչ է, որ «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագրում» տարանջատված չեն երկարաժամկետ ռազմավարությունը և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների բաշխման գործընթացում հետազոտական ոլորտը չի դիտվում որպես առաջնահերթություն:

Անհանգստացնող է, որ ՄՈՒՀ-ի կողմից գրեթե չի խրախուսվում ստեղծագործական և վերլուծական մտածելակերպը, ինչպես նաև տեղական և միջազգային մակարդակում լավ փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը, գործատուների հետ համատեղ հետազոտությունների իրականացումը:

Քանի որ ԱՊՔ-ում հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն մշակված չէ, հետևաբար, այստեղ ներդրված չեն հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, ինչը կարող է վտանգել ԱՊՔ-ի ուսանողների և դասախոսների հետազոտական ունակությունների զարգացումը, մասնագիտական առաջընթացը: Մինչդեռ, այս համատեքստում, փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ում

ուսանողներին տրվող որոշ հանձնարարականներ պարունակում են վերլուծական տարրեր, որոնց տարածելիությունը կարող է խթանել ՄՈՒՀ-ում հետազոտական բաղադրիչի զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի կողմից մշակված «Հետազոտությունների ոլորտի ռազմավարական ծրագրում» հստակ արտահայտված չեն ԱՊՔ-ի հետազոտական նպատակները, դրանք իրագործելու քայլերի հաջորդականությունն ու ժամկետները, մշակված չեն հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, դեռևս չեն խրախուսվում ստեղծագործական և վերլուծական մտածելակերպը, ինչպես նաև ՄՈՒՀ-ի կողմից քայլեր չեն ձեռնարկվում հետազոտական գործունեության միջազգայնացման առնչությամբ, ԱՊՔ-ի հետազոտական և ուսումնական գործընթացները փոխկապակված չեն, չի իրականացվում նաև դրական փորձի ուսումնասիրություն և տարածում, հետևաբար փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն չի բավարարում Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 6**-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ԱՊՔ-ն գտնվում է Արարատի մարզի Արարարտ քաղաքում, տեղակայված է Խանջյան 67 հասցեում 1 մասնաշենքով: ԱՊՔ-ի կրթական գործընթացը կազմակերպվում է մեկ մասնաշենքում, ուր առկա են՝ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, համակարգչային կաբինետներ, նորագույն տեխնիկայով հագեցած ռոբոտատեխնիկայի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, բուժսենյակ, սննդի ընդունման կետ, ուսուցչանոց, առարկայական 23 լսարան, նախնական զինվորական պատրաստության կաբինետ, գինեգործության և հյութերի արտադրության համար նախատեսված՝ արդի պահանջներին համապատասխանող լոբորատորիա:

ՄՈՒՀ-ի մասնաշենքը հնարավորինս կահավորված և տեխնիկապես հագեցած է: Չնայած 2017-2019թթ. արտաբյուջետային միջոցներով և այլ ֆինանսավորմամբ ԱՊՔ-ի շենքում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, սակայն դեռևս չվերանորոգված լսարաններ կան և ներդրումներ են պահանջում: Սքայ ակումբում և գինեգործության լսարաններում տեղադրված են կլոր սեղաններ: «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում առկա են եռաչափ 3D տպիչ, հաստոց, ռոբոտաշինության հավաքածուներ և այլն: ՄՈՒՀ-ն ունի գինեգործության լաբորատորիա, որտեղ կան անհրաժեշտ պայմանները գինեգործության դաս անցկացնելու համար: Գրադարանն ունի 20 ուսանողի համար նախատեսված ընթերցասրահ, գեղարվեստական և մասնագիտական գրականության, դասագրքերի գրապահոց:

Առցանց տարբերակով փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը չունի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, էլեկտրոնային գրադարան, մարզադահլիճը, որոշ լաբորատորիաներ վերանորոգման

անհրաժեշտություն ունեն: Գործատուների հետ համատեղ կիրառման նյութատեխնիկական ռեսուրսներ ևս առկա չեն:

ԱՊՔ-ի ԶԾ-ով սահմանված ռազմավարական նպատակներից է որակյալ ենթակառուցվածքներ ունենալը: Ըստ Ինքնավերլուծության՝ ԱՊՔ-ի ռազմավարական նպատակներին հասնելու խնդիրներից է ուսումնական, գիտական նպատակներով գույքային համալիրի արդյունավետ վերակազմավորման և օգտագործման ապահովումը և տեխնիկապես վերազինումը, դահլիճների, սրահների տեխնիկական հագեցվածության արդիականացումը, գրադարանի գրապահոցի վերանորոգումը:

ՄՈՒՀ-ում եկամուտները ձևավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, արտաբյուջետային ֆոնդի և այլ ֆինանսավորման հաշվին: Ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: ԱՊՔ-ի ֆինանսական միջոցների կառավարման և բաշխման հիմքում ընկած են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Նախահաշվի կազմման ժամանակ հաշվի են առնվում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղվող միջոցների և անհրաժեշտ ռեսուրսների պահանջը: Հաշվապահական հաշվառման բաժինը ներկայացնում է հաշվետվություն եռամսյակային կտրվածքով՝ ստացված մուտքերի և ելքերի վերաբերյալ: Առկա է ԱՊՔ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, սակայն ծախսերը չեն դիտարկվել ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի: Ռեսուրսային բազայի պահպանման և թարմացման նպատակով տարեկան բյուջեով մշտապես նախատեսվում են կապիտալ շինարարության և նորոգման ծախսեր, ինչպես նաև ընթացիկ նորոգման ծախսեր: Փորձագիտական ուսումնասիրություններից ևս պարզ դարձավ, որ տարեկան ծախսերի նախահաշվով պլանավորված են կապիտալ բնույթի ծախսերը: Բացի այդ՝ ՄՈՒՀ-ն ունի եկամուտների ավելացման հնարավորություններ և ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը հիմնված է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա: ՄՈՒՀ-ը մշակել է ֆինանսների տնօրինման ընթացակարգ, ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ինքնվերլուծությունում նշվում է, որ ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում քոլեջը կկարողանա համապատասխան քանակի ռեսուրս ապահովել: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների թվի ավելացման դեպքում լսարանների խնդիր կարող է առաջանալ: ՄՈՒՀ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն:

ՄՈՒՀ-ի ուսանողներն ու աշխատակիցները օգտվում են ողջ ռեսուրսային բազայից՝ համաձայն ԱՊՔ-ի կանոնադրությամբ ամրագրված իրավունքների: ՄԿԾ-ների նպատակներին համահունչ ՄՈՒՀ-ում առկա է համապատասխան գրականություն:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավման նպատակով 2020թ-ին ստեղծվել է ՄՈՒՀ-ի կայքէջը՝ www.ascol.am: Նախատեսվում է ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ, ապահովել դրա մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ այդ ուղղությամբ արդեն իսկ տարվել են որոշակի աշխատանքներ: ԱՊՔ-ի գործավարության կազմակերպումը իրականացնում է նաև քարտուղարությունը: ՄՈՒՀ-ում առկա է արխիվ:

ԱՊՔ-ի տարածքը պարսպապատված է, առկա է մուտքի և բակի տեսահսկման համակարգ, մուտքը հսկվում է նաև հերթապահ-պահակի կողմից: Այցի ընթացքում հավաստեցին, որ միջանցքներում սահմանված է հերթապահություն, և առանց տնօրենի, կուրսղեկի, ծնողի իմացության ուսանողը չի կարող դուրս գալ ՄՈՒՀ-ի տարածքից: ՄՈՒՀ-ն ունի բացվող մեծ դարպաս, շքամուտքն ունի թեքահարթակ, բոլոր միջանցքներում արտակարգ իրավիճակների պարագայում առկա են տարհանման սխեմաներ, միջանցքներում նաև առկա են հակահրդեհային կրակմարիչներ:

ԱՊՔ-ում առկա է վերանորոգված բուժկետ՝ անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով, այն գտնվում է առաջին հարկում: Բուժկետը հետևում է նաև համավարակի կանխաարգելիչ միջոցառումներին, յուրաքանչյուր լսարանում առկա են ախտահանման պարագաներ, լսարաններում աթոռները դասավորված են որոշակի հեռավորության վրա:

Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի աշխատակիցների և ուսանողների տարհանման աշխատանքները կատարվում են պարբերաբար՝ ՔՊ շտաբի պետի մասնակցությամբ, ՀՀ ԱԻՆ-ի հետ համատեղ: Հետպատերազմյան ժամանակահատվածում նախատեսվում է «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայում, «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլում ներառել պատերազմական իրավիճակներում առաջին բուժօգնության կազմակերպման հմտությունների ձեռք բերման գործնական պարապմունքներ: Նաև պարզվեց՝ ԱՊՔ-ի շենքը ամրացման կարիք ունի, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ:

ՄՈՒՀ-ում առկա չեն ռեսուրսներից բավարարվածության գնահատման հիմքերը, կրթական միջավայրի գնահատման հարցումներ չեն կատարվում, սակայն այցից կարելի է փաստել, որ ռեսուրսները հասանելի են, կայունության, արդյունավետության գնահատման մեխանիզմներ ևս առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ ԱՊՔ-ի ռեսուրսները ներկա պայմաններում ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը: Դրական է դիտվում, որ 2017-2019թթ. ԱՊՔ-ի շենքում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, նախատեսվում են վերանորոգել լսարաններ, մարզադահլիճ, որոշ լաբորատորիաներ: Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ը լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ է փնտրում շենքի ամրացման համար, ինչպես նաև քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաների, էլեկտրոնային գրադարանի ձևավորման համար, ինչը կարող է նպաստել կրթական գործընթացների արդյունավետությանը: Մտահոգիչ է, որ գործատուների հետ համատեղ կիրառման նյութատեխնիկական ռեսուրսներ առկա չեն՝ խոչընդոտելով գործնական հմտությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմ, որի հիմքում ընկած է տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Հատկանշական է, որ տարեկան բյուջեում նախատեսվում են ծախսեր, որոնք ուղղված են ՄՈՒՀ-ի նպատակների իրականացմանը, մասնավորապես՝ մշտապես նախատեսվում են կապիտալ շինարարության և նորոգման, ընթացիկ նորոգման ծախսեր: Սակայն ծախսերն ամբողջությամբ բացված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել նպատակային կդարձներ կատարվող ֆինանսական

հատկացումները: Հատկանշական է, որ ԱՊՔ-ն շարունակաբար նոր ֆինանսական ռեսուրսների ձևավորման աղբյուրներ է փնտրում, ինչը կարող է նպաստել է ԶԾ-ով սահմանված ռազմավարական նպատակներից որակյալ ենթակառուցվածքներ ունենալուն և ֆինանսական կայունությանը:

Դրական է դիտվում, որ ԱՊՔ-ում ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում, այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում ՄՈՒՀ-ը կկարողանա համապատասխանաբար ապահովել մարդկային և ֆինանսական ռեսուրսներով, միևնույն ժամանակ լսարանային ռեսուրսները քիչ լինելու պատճառով անհանգստացնող է, որ ԱՊՔ-ն չի կարողանա շատ ուսանողներ ընդունել:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում առկա չէ ռեսուրսներից բավարարվածության գնահատման հիմքերը, կրթական միջավայրի գնահատման հարցումներ չեն անցկացվում, ինչը կարող է խոչընդոտել շահակիցների իրական կարիքների վերհանմանը:

Ողջունելի է ԱՊՔ-ում ապահով և անվտանգ միջավայրի ստեղծմանն ուղղված աշխատանքները, որոնք դրական են անդրադառնում ՄՈՒՀ-ի նկատմամբ վստահության բարձրացմանը: Նաև դրական է, որ ներքին փաստաթղթաշրջանառությունը համակարգված է, որը վերահսկվում է տնօրենի կողմից՝ ապահովելով ՄՈՒՀ-ի անխափան գործունեությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն ՄԿԾ-ների իրականացման համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ, ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և նորերի ձեռքբերման ուղղությամբ, առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման, սահմանված առաքելությունների և նպատակների իրագործման համար և բավարարում է Չափանիշ 7- պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի փաստաթղթերը ուսումնասիրելիս պարզեց, որ ՄՈՒՀ-ը չունի հաշվետվողականության սահմանված կանոնակարգ, այնուհանդերձ ներկայացվել են հետևյալ հաշվետվությունները՝ բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություններ՝ 2017-2018, 2018-2019, 2019-2020 տարիների համար, առկա է արտաքին շահակիցների համար 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվություն , ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվություն, 2019-2020 ուստարվա որակի ապահովման ենթակառուցվածքի հաշվետվություն, ԱՊՔ-ի տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն, 2019-

2020 ուսումնական տարվա ուսումնական մասի հաշվետվություն, 2019-2020 ուսումնական տարվա մեթոդական խորհրդի հաշվետվություններ, պարբերաբար ներկայացվում են պետական ապարատի հաշվետվությունները: ԱՊՔ-ի տնօրենի 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվությունը և ՀՀ ԿԳՍՄՆ ԱՊՔ-ի 2019-2020 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունները ներառում են վերլուծական տարրեր, սակայն դրանցում չկան արդյունքների ամփոփումներ: Հաշվետվողականությունը գործում է ներքևից վերև և վերևից ներքև սկզբունքով:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ն ունի կայքէջ (www.ascol.am), որը ստեղծվել է 2020թ., և կայքի թարմացումը պարբերական բնույթ չի կրում, ներկայացվող տեղեկատվությունը սահմանափակ է, փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում կայքէջում բացակայում էին ԱՊՔ-ի գործունեության ընթացակարգերը և կանոնակարգերը: ՄՈՒՀ-ն ունի Ֆեյսբուքյան մի քանի էջ: Ֆեյսբուքյան էջերից մեկը պարունակում է բավար տեղեկատվություն առկա մասնագիտությունների, ընդունելության տեղերի վերաբերյալ: Այստեղ ներկայացված են ԱՊՔ-ի կողմից կազմակերպվող բաց դասերի, առցանց դասերի մի քանի հոլովակներ: ՄՈՒՀ-ի կողմից անցկացվող ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակության անդամների համար իրականացվում է նաև դպրոցների ուսուցչական և աշակերտական կազմի հետ պարբերաբար հանդիպումների միջոցով, մարզկենտրոնի և համայնքապետարանի հետ համագործակցությամբ:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ԱՊՔ-ն չունի հասարակության հետ կապերի բաժին, այնուհանդերձ կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով ներկայացվող տեղեկատվությունը համակարգվում է համակարգչային տեխնիկայի սպասարկողի կողմից: Մինչդեռ ԱՊՔ-ի 2018-2023թթ ԶԾ-ի երկրորդ բաժինը վերաբերում է հանրային ներգրավմանը և ծառայություններին, որտեղ կարևորվում է հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը, և առցանց տարբերակով այցի ընթացքում փորձագիտական խումբը պարզեց, որ շրջանավարտների հետ հետադարձ կապը պահպանվում է 2017թ-ից: ԱՊՔ-ի կողմից տպագրվում և տարածվում են ՄՈՒՀ-ը ներկայացնող բուկլետներ: ԱՊՔ-ում կազմակերպվում են լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկով ազգային, մշակութային միջոցառումներ. ՄՈՒՀ-ի ուսանողները նաև մասնակցում են այլ համապետական և մարզային մշակութային միջոցառումներին և փառատոներին:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում համայնքի երիտասարդների հետ կազմակերպվում են սեմինար քննարկումներ, հանդիպումները տեղի են ունենում Սքայ ակումբում: Կազմակերպվում են նաև կարճաժամկետ դասընթացներ, աշակերտների համար բաց դռների օրեր՝ ծանոթացնելով ՄՈՒՀ-ում առկա մասնագիտություններին և ուսանողական կյանքին:

Փորձագիտական խումբը պարզեց, որ ՄՈՒՀ-ում հետադարձ կապի մեխանիզմներ թույլ են գործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ն ունի ներդրված հաշվետվողականության համակարգ, թեև հաշվետվությունները հիմնականում նկարագրական բնույթի են: Հաշվետվությունները ներկայացված են 2

տարվա կտրվածքով և ուսումնասիրության տեսանկյունից կարճաժամկետ բնույթ են կրում: Փորձագիտական խումբը արձանագրեց, որ ՄՈՒՀ-ի հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը քիչ է, որի առկայությունը դրականորեն կարող է անդրադառնալ ՄՈՒՀ-ի գործունեության գնահատման վրա՝ նպաստելով դրական փորձի, ուժեղ և թույլ կողմերի դուրսբերմանը, բարելավմանն ուղղված արդյունավետ քայլերի մշակմանը:

Դրական է այն հանգամանքը, որ հասարակության հետ հետադարձ կապի ապահովման համար ստեղծված են ԱՊՔ-ի կայքէջը և ֆեյսբուքյան էջը, մինչդեռ գործում են մի քանի ֆեյսբուքյան էջեր, և անհանգստացնող է, որ շահագրգիռ անձիք լիարժեք տեղեկատվություն կարող են չստանալ (Փորձագիտական խումբի մոտ խնդիրներ առաջացան ֆեյսբուքյան էջը որոնելիս):

Դրական է նաև, որ ՄՈՒՀ-ը 2017թ-ից սկսել է պահպանել է շրջանավարտների հետ կապը, ինչը կօգնի հետևել նրանց կարիերայի հետագծին՝ նպաստելով ուսումնական գործընթացի արդյունավետությանը:

Փորձագիտական խումբը դրական է դիտում ՄՈՒՀ-ի կողմից հասարակությանը տրամադրվող տեղեկատվության թափանցիկությունը և հասանելիությունը, սակայն գտնում է, որ առկա տեղեկատվությունը ամբողջական չէ (օրինակ կայքէջը չի պարունակում շրջանավարտների մասին տեղեկատվությունը): Հատկանշական է, որ կայքէջում տեղադրված է թարմ տեղեկատվություն, այդուհանդերձ էջի թարմացումը պարբերական բնույթ չի կրում:

Ողջունելի է, որ ԱՊՔ-ի կողմից կատարվում են քայլեր, հասարակությանը մասնակից դարձնելու ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներին,օրինակ՝ Սքայ ակումբի հանդիպումները, կարճաժամկետ դասընթացները, այդուհանդերձ, այդ գործընթացը հստակ կանոնակարգված չէ, հստակ առանձնացված չեն մեխանիզմները, որոնց առկայությունը կարող է դրական անդրադառնալ ՄՈՒՀ-ի ձեռքբերումների և գրանցված արդյունքերի վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն կազմում և ներկայացնում է հաշվետվություններ ներքին և արտաքին շահակիցներին, ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ը ապահովում է ընթացակարգերի իրականացումը, հաշվետվությունների թափանցիկությունն ու հասանելիությունը, քայլեր են ձեռնարկվում հասարակությանը մասնակից դարձնելու ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներին, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 8**-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: 2018-2023թթ. ԱՊՔ-ի ԶԾ-ով նախատեսվում է զարգացնել սոցիալական գործընկերությունը: ԱՊՔ-ն համագործակցում է մի քանի միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչություններ հետ՝ «Վորլդ Վիժն» («Վորլդ Վիժն» հայաստանյան գրասենյակի կողմից հիմնվել է Սքայ ակումբը, որտեղ ուսանողները ծանոթանում են ձեռներեցության հմտություններին, այստեղ նաև անցկացվում են սեմինար քննարկումներ), ´´GIZ´´, համագործակցում են նաև տեղական

այնպիսի կազմակերպությունների հետ , ինչպիսիք են՝ «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» բարեգործական կրթական հիմնադրամը (վերազինել են «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Խոհարարական գործ», «Արմաթ» լաբորատորի առարկայական կաբինետները), «Արմաթ» ինժեներական լաբորատորիան (ինժեներական նախագծեր իրականացնելու շրջանակում), «Հայ Բիզնես Բանկ» ՓԲԸ-ն, «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ն, «Արարատի համայնքապետարանը», «Արարատի մարզպետարանը» (պրակտիկաների կազմակերպման և անցկացման հետ կապված), ինչպես նաև դպրոցները և մանկապարտեզները՝ ուսանողներ ներգրավելու և պրակտիկաներ անցկացնելու համար: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզվեց նաև, որ ԱՊՔ-ի կողմից կնքվել են նոր համաձայնագրեր՝ «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի և «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հետ: Բացի այդ, Ինքնավերլուծությունում նշվում է, որ միջազգային հարթակում դեռևս համագործակցային և գործընկերային հարաբերություններ ԱՊՔ-ն չունի: Գործատուները ներգրավված չեն քոլեջի դասավանդման գործընթացում և, այցից պարզ դարձավ, որ նրանց առաջարկությունների ներդրումը դեռևս պլանավորման փուլում է:

Ըստ Ինքնավերլուծության՝ նաև Կարիերայի կենտրոնը ակտիվ գործունեություն է ծավալում «Զբաղվածության կենտրոն»-ի հետ՝ մասնակցելով վեջինիս կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառներին՝ նպատակ ունենալով ապահովել շրջանավարտների մուտքը աշխատաշուկա:

Կրթության շարունակականության հետ կապված՝ ԱՊՔ-ն համագործակցում է Հայաստանի առաջատար պետական ԲՈՒՀ-երի հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ի լավագույն շրջանավարտներին կրթությունը շարունակելու գործընկեր ԲՈՒՀ-երում: Առցանց փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ համագործակցությունը բացակայում է նմանատիպ ՄՈՒՀ-երի հետ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄՈՒՀ-ում դասախոսների և վարչական կազմի ռուսաց լեզվի իմացությունը լավ է, դասախոսների և ուսանողների անգլերեն լեզվի իմացությունը՝ բավարար:

Դատողություններ: Հատկանշական է, որ ԱՊՔ-ն համագործակցում է մի շարք տեղական կազմակերպությունների և ՀՀ-ում ներկայացուցչություններ և մասնաճյուղեր ունեցող արտասահմանյան կազմակերպությունների հետ, քայլեր է ձեռնարկում ընդլայնելու համագործակցությունը այլ ընկերությունների հետ, ինչը դրական կանդրադառնա ՄՈՒՀ-ի արտաքին կապերի հաստատմանն ուղղված քաղաքականության իրագործման վրա, ինչպես նաև գործատու կազմակերպությունների հետ համագործակցությունը կարող է ավելացնել ուսանողների գործնական հմտությունները:

Քանի որ գործատուները ԱՊՔ-ում ներգրավված չեն որպես դասախոսներ, ուստի ՄՈՒՀ-աշխատաշուկա կապը թույլ է դրսևորվում՝ վտանգելով շրջանավարտների կարիերայի հնարավորությունները:

Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ Կարիերայի կենտրոնը սկսել է ակտիվ գործունեություն ծավալել «Զբաղվածության կենտրոն»-ի հետ, ուստի նրանց համագործակցությունը և կազմակերպված աշխատանքի տոնավաճառները կարող են նպաստել շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը:

Թեև ԱՊՔ-ն համագործակցում է հայաստանյան մի շարք ԲՈՒՀ-երի հետ՝ կրթությունը շարունակելու հնարավորություն ընձեռելով ՄՈՒՀ-ի լավագույն ուսանողներին, այդուհանդերձ, նպատակահարմար է, որ համագործակցություն լինի նաև նմանատիպ ՄՈՒՀ-երի հետ, ինչի արդյունքում կարող է դուրս բերվել և ներդրվել լավ փորձը, ապահովվել ուսանողների և դասախոսների շարժունությունը:

Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ում վարչական կազմը, դասախոսները և ուսանողները տիրապետում են ռուսերենին և անգլերենին, ինչը կարող է դրականորեն անդրադառնալ ՄՈՒՀ-ի միջազգայնացման, շարժունության ապահովման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը գործուն քայլեր է ձեռնարկում՝ ընդլայնելու համագործակցությունը տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, ապահովում է համագործակության լայն շրջանակ, ինչպես նաև ԱՊՔ-ի ներքին շահակիցները տիրապետում են անգլերեն և ռուսերեն լեզուներին, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 9**-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Ըստ Ինքնավերլուծության՝ ԱՊՔ-ում կրթության ներքին Որակի ապահովման (Այսուհետ՝ ՈԱ) քաղաքականության հիմքերը դրվել են 2015 թվականից, ստեղծվել է կրթության ներքին ՈԱ ենթակառուցվածք, որը սկսել է հանդես գալ որպես առանձին ստորաբաժանում: ՄՈՒՀ-ում 2017-2018 ուստարում մշակվել են «Կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի (հանձնաժողովի) հայեցակարգ», «Կրթության ներքին որակի կանոնակարգ», «Ներքին և արտաքին գնահատման չափանիշների իրականացման կարգ» փաստաթղթերը: «Կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի (հանձնաժողովի) հայեցակարգ»-ը ներառում է ՈԱ հայեցակարգի հիմնական նպատակը, խնդիրները, ՈԱ հիմնական սկզբունքները, իրականացման մեխանիզմները, իրականացման առաջնահերթ ոլորտները: Ըստ հայեցակարգի՝ ՈԱ հիմնական նպատակն է ուրվագծել ՈԱ ներքոլեջային համակարգի հայեցակարգային-մեթոդաբանական այն հիմքերը, որոնք կնպաստեն որակի մշակույթի ձևավորմանը, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրմանը, ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթությունների իրագործման նկատմամբ վերահսկելիության, գնահատման և բարելավման մեխանիզմների ապահովմանը, մասնագիտական կրթության որակի բարձրացմանը: «Կրթության ներքին որակի կանոնակարգ»-ի համաձայն ԱՊՔ-ի ներքին որակի հանձնաժողովի նպատակն է իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ մանկավարժական խորհրդին առաջարկների ներկայացում:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ հստակեցված չեն հայեցակարգով սահմանված նպատակների և քայլերի կատարման ժամկետները, իսկ կարճաժամկետ կտրվածքով առկա չեն արձանագրված արդյունքներ: Միաժամանակ պարզվեց, որ «Կրթության ներքին ՈԱ ենթակառուցվածքի/հանձնաժողովի/ հայեցակարգ»-ը մշակելիս օգտվել են բուհական ՈԱ հայեցակարգերից:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ում գործում է ՈԱ ներքին կենտրոնն իր աշխատասենյակով: Ըստ 2020 թ.-ի հաստիքացուցակի կենտրոնն ունի մեկ հաստիք՝ ՈԱ ներքին կենտրոնի ղեկավար, առկա է ՈԱ համակարգի քարտեզ, ՈԱ երեք՝ ՈՒսումնամեթոդական, ՈՒսանողական, Տեխնիկական հանձնաժողովներ: Այդուհանդերձ, այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովները դեռևս լիարժեք չեն գործում, սակայն աշխատանքներ են տարվում վերջիններիս ՈԱ գործընթացներում ներգրավելու համար: ՈԱ հիմնական խնդիրների ձևակերպումները դեռևս պլանավորման փուլում են:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացներում ներգրավված աշխատակիցները չեն վերապատրաստվել: Միաժամանակ պարզվեց, որ ՄՈՒՀ-ում աշխատանքներ են տարվում ՈԱ գործընթացների շուրջ համախմբել կադրային ռեսուրսներ:

ՈԱ գործընթացներում ներքին շահակիցներից ներգրավված են Ինքնավերլուծություն իրականացրած թիմը, իսկ արտաքին շահակիցների ներգրավվածությունը տեսանելի չէ: Ըստ «Կրթության ներքին ՈԱ ենթակառուցվածքի (հանձնաժողովի) հայեցակարգ»-ի՝ որակի գնահատման գործիքներից են հարցումների միջոցով ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանումը, սակայն այցից պարզ դարձավ, որ հարցմանը մասնակցել են ներքին շահակիցներից միայն ուսանողները, սակայն արդյունքները չեն վերլուծվել:

ՈԱ ներքին կենտրոնը ստեղծվել է 2020 թվականից, ուստի փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ համակարգը ՊԻԳԲ շրջափուլի պլանավորման փուլում է և համակարգի մշտադիտարկումներ դեռևս չեն իրականացվել:

ԱՊՔ-ն 2020 թ-ին արտաքին գնահատման գործընթացների համար կատարել է Ինքնավերլուծություն՝ 10 չափանիշներով, ձևավորել է կանոնակարգեր, ընթացակարգեր, աշխատակարգեր, ԱՊՔ-ի գործունեությունը համակարգող փաստաթղթեր, լրացվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, որը փորձագետներին օգնեց իրականացնել արտաքին գնահատում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ն մշակել է ՈԱ ընթացակարգեր և քաղաքականություն, ունի ձևակերպված նպատակներ, ինչպես նաև հիմքեր է դրել ՈԱ մշակույթի ձևավորման համար: Քանի որ ՈԱ գործընթացները նոր են ներդրվել և շրջափուլը դեռևս ավարտված չէ, ուստի բացակայում են վերլուծությունները: Մտահոգիչ է, որ «Կրթության ներքին ՈԱ ենթակառուցվածք (հանձնաժողովի) հայեցակարգ»-ը մշակելիս օգտվել են բուհական ՈԱ հայեցակարգերից և հաշվի չի առնվել քոլեջի առանձնահատկությունները:

Դրական է դիտվում, որ ՈԱ գործընթացների կազմակերպման համար ԱՊՔ-ում հիմնվել է նոր ստորաբաժանում, որն ունի իր գրասենյակային տարածքը, ՈԱ ներքին ապահովման գործընթացները ղեկավարում է ստորաբաժանման ղեկավարը, բացի այդ ՈԱ գործընթացներում ներգրավված են ՄՈՒՀ-ի ներքին շահակիցներից Ինքնավերլուծություն իրականացրած դասախոսները՝ նպաստելով ՄՈՒՀ-ում ՈԱ մշակույթի ներդրմանը: Բացի այդ, ԱՊՔ-ն արդեն իսկ ՈԱ գործընթացների շուրջ

համախմբել է ներքին շահակիցներին, միևնույն ժամանակ արտաքին շահակիցների մասնակցությունը առկա չէ: Այդուհանդերձ, այցից պարզ դարձավ, որ ՈԱ հանձնաժողովները դեռևս ամբողջական չեն գործում: Նրանց ամբողջական գործարկումը կարող է նպաստել ՈԱ նպատակների իրականացմանը:

Քանի որ ԱՊՔ-ում որակի մշակույթը դեռևս ներդրման փուլում է, առկա են ՈԱ կարգավորող փաստաթղթեր, այդուհանդերձ մտահոգիչ է, որ նույնիսկ կարճաժամկետ կտրվածքով վերլուծությունները սակավ են, առկա չեն կրթական գործընթացների արդյունքների, դրանց գնահատականների և բարելավման ուղիների ամփոփումները, ինչի արդյունքում կարող է վտանգվել որակի մշակույթի ներդրումն ու խնդիրների դուրս բերումը, բարելավումների պլանի մշակումն ու իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ արտաքին գնահատման գործընթացների համար ՄՈՒՀ-ն իրականացրել է Ինքնավերլուծություն, առկա են համապատասխան հիմքեր, լրացվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ինքնավերլուծությունում քիչ են վերլուծությունները, տվյալների հավաքագրումը և վերլուծումը գտնվում է սաղմնային փուլում: Այս գործընթացին ավելի համակարգված և վերլուծական մոտեցումը կնպաստի քոլեջում որակի շարունակական բարելավման միջավայրի ներդրմանը:

Թեև ԱՊՔ-ն արտաքին շահակիցներին տրամադրում է տեղեկատվություն նաև Ֆեյսբուքյան էջի և կայքէջի միջոցով, սակայն երկու տիրույթում էլ ՈԱ առնչվող տեղեկատվությունը համապարփակ չէ, ինչը կարող է վտանգել ՄՈՒՀ-ի ՈԱ մասին ամբողջական տեղեկատվության հասանելիությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈԱ գործընթացները ԱՊՔ-ում նոր են ներդրվել և կարճ ժամանակահատվածում ԱՊՔ-ն ստեղծել է ոլորտը կարգավորող փաստաթղթեր, ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացներում ներգրավված են դասախոսները, առկա է որակի ներքին ապահովման կենտրոն, կենտրոնի ղեկավար, իրականացվել է Ինքնավերլուծություն, խրախուսվում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում, ԱՊՔ-ն ունի ներքին որակի ապահովման համակարգի գործարկման ներուժ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն:Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Ամսաթիվ՝ 26.11.2020 թ.

_____

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան 2000 թվականին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. Նույն բուհի, «Ֆինանսներ և վարկ» ամբիոն, ասպիրանտուրա. 2006թ. ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս, Տնտեսագիտության թեկնածու, 2010թ. դոցենտ՝ ատենախոսությունը՝ «Գործառնական ֆինանսական կառավարումը արտադրական առևտրային կազմակերպություններում/ՀՀ մշակող արդյունաբերության նյութերով/» թեմայով: Մասնակցել է հետևյալ վերապատրաստումներին, դասընթացներին և ծրագրերին. 2019թ. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով. 2019թ. ICARE-Application of Econometrik Models Using STATA for Addressing Economik Questions 2016թ.Training on capacity building for implementing bologna reforms.

2016թ. ՀՊՏՀ՝ «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում», դասընթացներ.

2009թ. ՀՊՏՀ՝ ՀՊՏՀ դասախոսների վերապատրաստման դասընթաց:

Քրիստինե Հակոբյան 2004 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Դասավանդում տարրական դասարաններում մասնագիտությունը (մագիստրոս)՝ մեթոդիստ որակավորմամբ: 2015 թ. մասնակցել է ՀՀ ԳԱԱ հետևյալ հեռավար դասընթացներին՝ Տուրիզմի հիմունքներ Տուրիզմ մասնագիտությունը, Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն՝ Մշակույթի մասնագիտություն, Մարդկային ռեսուրսների կառավարում: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես աշխատակազմի ղեկավար, Տուրիզմի դասախոս: Հեղինակել է՝ Մասնագիտական ուսումնական 2 ձեռնարկ, Մասնագիտական կրթական չափորոշչ, Հեռավար էլեկտրոնային դասընթացներ:

Լուսինե Սահակյան 2007 թվականին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինժեներատնտեսագիտական ֆակուլտետի Ինֆորմացիոն համակարգեր մասնագիտությունը: 2011թ-ին Հայաստանի պետական ագրարային համալսարան Ինֆորմատիկային և մաթեմատիկական մոդելավորման ֆակուլտետի Մաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում տնտեսագիտության մեջ մասնագիտությունը: Ատենախոսության թեման՝ «Բանկային և վարկային ռիսկերի տնտեսագիտամաթեմատիկական վերլուծությունը ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների օրինակով»:

2014 թվականից աշխատում է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի Բաղեյան պետական Քոլեջում՝ որպես Տնտեսագիտություն և ինֆորմատիկա առարկաների դասախոս:

Մարիամ Գյուրջյան 2019 թվականին ավարտել է Երևանի Ն. Աճեմյանի անվան Տարածաշրջանային N 2 պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում և աուդիտ»

բաժինը: Այժմ սովորում է Երևանի Պետական Համալսարանի «Տնտեսագիտություն» ֆակուլտետի 3 – րդ կուրսում:
2018 թվականի սեպտեմբերից եղել է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների նախագահներին համակարգողի տեղակալ ու ներկայացրել ուսանողության ձայնը Երիտասարդական հիմնադրամում:
2019 թվականի հունվարից աշխատում է որպես հաշվապահ «Base» հաշվապահական կազմակերպությունում:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Արարատի պետական քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի առցանց այցի

23.11.2020թ.-26.11.2020թ.

	23.11.2020թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն	Մուտքային տվյալներ
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	9:30	10:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/85317826240?pwd=Z2daWldhdGV4RzhpelZKMDhEbnNVQT09 Meeting ID: 853 1782 6240 Passcode: 633071
2.	Հանդիպում քելեջի փոխտնօրենի հետ	11:00	12:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/85025921726?pwd=WXl3aXFpK3JmQUtsS2wxdWJRN3p0QT09 Meeting ID: 850 2592 1726 Passcode: 246055
3.	Հանդիպում քոլեջի խորհրդի անդամների հետ	12:30	13:20	50 րոպե	https://us02web.zoom.us/j/83816632671?pwd=RkdLVk5HUGd5SDl6OTBHckQyVXNhQT09 Meeting ID: 838 1663 2671 Passcode: 384421
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/87352713620?pwd=R1QyQzBQZmd4UDJXQXZTMWdoU0tvZz09 Meeting ID: 873 5271 3620 Passcode: 185130
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (8-10 հոգի)	14:45	15:45	60 րոպե	https://us02web.zoom.us/j/81649795128?pwd=VWo4bTU5LzQ4cUZhRVc5enhPTHhwUT09 Meeting ID: 816 4979 5128 Passcode: 379571
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե	https://us02web.zoom.us/j/87521805311?pwd=NmJKNEtPSUl0RExmSjVCUjJJdGpJQT09 Meeting ID: 875 2180 5311 Passcode: 543303

	24.11.2020թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն	Մուտքային տվյալներ

1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ (Հանրակրթ. ծրագր. բաժնի վարիչ, Տնտեսագիտության ամբիոնի վարիչ, ուսմասվար միջին մասնագիտական գծով, Պրակտիկայի բաժնի վարիչ)	9:30	10:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/867924 23771?pwd=ak5zRmJ5a2UrVjRUb m5ON3pXRVlnQT09 Meeting ID: 867 9242 3771 Passcode: 755745
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	11:00	12:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/871663 46105?pwd=VHVvSjJ0eEF5UnhH WVJ6amNLR1phdz09 Meeting ID: 871 6634 6105 Passcode: 570046
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/880095 09718?pwd=UDNwT3BlakFvNC9z elAxMTVMMXRqZz09 Meeting ID: 880 0950 9718 Passcode: 371380
4.	Հանդիպում գործատուների հետ (8-10 հոգի)	13:45	14:45	60 րոպե	https://us02web.zoom.us/j/886366 50651?pwd=SzFBV1JESmRVSWtE aG55N1lvSEJjQT09 Meeting ID: 886 3665 0651 Passcode: 368575
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:15	15:55	40 րոպե	https://us02web.zoom.us/j/856111 48276?pwd=dXdzcHpQNzJmUzR HR2o4dlJVZlRLdz09 Meeting ID: 856 1114 8276 Passcode: 315576
6.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	16:30	17:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/824173 28103?pwd=b1lrdFZTZ3hkTWVC YjdoMGg5aVltZz09 Meeting ID: 824 1732 8103 Passcode: 573748
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/897481 00162?pwd=Ylh5NUd6KzAvcE1Y OUg3dlNxZkIwZz09 Meeting ID: 897 4810 0162 Passcode: 728144

	25.11.2020թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն	Մուտքային տվյալներ
1.	Հանդիպում Ֆինանսներ, Սպասարկման կազմակերպում, Հաշվապահական հաշվառում ՄԿԾ-ների պատասխանատուների հետ	09:30	11:00	90 րոպե	https://us02web.zoom.us/j/83535716932?pwd=emQ1K1grYWczMGFtVU1BZVpoS0ZrQT09 Meeting ID: 835 3571 6932 Passcode: 592871
2.	Հանդիպում Ֆինանսներ, Սպասարկման կազմակերպում, Հաշվապահական հաշվառում ՄԿԾ-ների դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	11:15	12:45	90 րոպե	https://us02web.zoom.us/j/81699415287?pwd=enk3Vmt0Z2lhWmYyMFRZVndKTzM3dz09 Meeting ID: 816 9941 5287 Passcode: 525578
3.	Ընդմիջում, փրձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/87059217284?pwd=T1FHRHBLeWNKK1ZQTkwwcHhiek5BUT09 Meeting ID: 870 5921 7284 Passcode: 659924
4.	Հանդիպում Ֆինանսներ ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի) Հանդիպում Սպասարկման կազմակերպում ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի) Հանդիպում Հաշվապահական հաշվառում ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	14:00	15:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/82205518332?pwd=b0hHdE91NVA5OUxveW9kd0NKdXZYUT09 Meeting ID: 822 0551 8332 Passcode: 286398
5.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղորդման պատ., պրակտիկայի ղեկավար, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի տեսուչ,	15:30	16:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/85339180451?pwd=d0VCeTFZUnJucEVESVl5WFdCb2lGQT09 Meeting ID: 853 3918 0451 Passcode: 595825
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	17:00	19:00	120 րոպե	https://us02web.zoom.us/j/89001992652?pwd=eVdPVStJL0o5NkFRTzRKS2NCZE94QT09 Meeting ID: 890 0199 2652 Passcode: 530130

	26.11.2020թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն	Մուտքային տվյալներ
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:30	10:30	60 րոպե	https://us02web.zoom.us/j/84633127288?pwd=ekVSNkhnRFVqTEVwOXBLOXNPL0F5QT09 Meeting ID: 846 3312 7288 Passcode: 123706
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե	https://us02web.zoom.us/j/88338799521?pwd=NHdCaEVYMkppU0ErU3M4T0luaCtqUT09 Meeting ID: 883 3879 9521 Passcode: 168791
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:00	12:40	40 րոպե	https://us02web.zoom.us/j/86022825467?pwd=UUQ0VDVka1VXVGc2L2VTVWg5TTg1dz09 Meeting ID: 860 2282 5467 Passcode: 418007
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե	https://us02web.zoom.us/j/88693974387?pwd=MFNBRGE3NCtJc2NJZFhvL1JvK2RsQT09 Meeting ID: 886 9397 4387 Passcode: 053772

5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:15	15:15	60 րոպե	https://us02web.zoom.us/j/81526285730?pwd=TVFnMUhtOXIzT09MbmhVVlRkZ0Zzdz09 Meeting ID: 815 2628 5730 Passcode: 063349
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15: 30	17: 00	90 րոպե	https://us02web.zoom.us/j/84760970630?pwd=dTE4WkFUdmFoMnI3RGFiYVJWRkJadz09 Meeting ID: 847 6097 0630 Passcode: 073482
7.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե	https://us02web.zoom.us/j/81577660664?pwd=ZHY3VEN5R1ZVRHo5NUpBcWF6NHhoQT09 Meeting ID: 815 7766 0664 Passcode: 024451

16.11.2020 թ.

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Զեկուցագիր 2019-2020թթ. ուսումնական մասի ծրագրերի կատարման վերաբերյալ	1
2.	Արտաքին և ներքին շահակիցների կարիքների վեր հանման արձանագրություններ	1
3.	2019-2020 վերլուծություններ, հաշվետվություններ	1
4.	Բոլոր կառույցների բոլոր նիստերի վերաբերյալ տեղեկատվության թղթապանակ	1
5.	Խորհրդի արձանագրությունների մատյան	1
6.	Կառավարման խորհրդի նիստին մանկավարժական խորհրդի անդամների ընտրության արձանագրություն	2
7.	Ուսանողական խորհրդի նիստի արձանագրությունը կառավարման խորհրդի անդամների ընտրության համար	2
8.	ԱՊՔ 2019-2020 ուստարվա զարգացման ծրագրով, ուսումնական մասի 2019-2020 ուստարվա զարգացման ծրագրով նախատեսված այն կետերի մասով հաշվետվություններ, որոնք արդեն իրագործվել են	2
9.	Առարկայական նկարագրեր («Ձեռներեցություն» , «Բանկային գործի հիմունքներ», «Ֆինանսական շուկաներ», «Պետական ֆինանսներ», «Համայնքային ֆինանսներ», «Բյուջետային համակարգ» առարկաների)	3
10.	Ամբիոնի արձանագրությունների մատյան	3
11.	Հաստատված մասնագիտական կրթական մոդուլային ծրագիր	3
12.	Քննական հարցատոմսերի նմուշներ	3
13.	Վերապատրաստված դասախոսների ցանկն ու վերապատրաստման վկայականները	3
14.	Մասնագիտական առարկաների դասալսումների վերլուծություն	3
15.	Կրթությունը բուհերում շարունակող ուսանողների ցանկ	3
16.	Ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների իրականացման համար գործատուների հետ կնքված պայմանագրեր	3
17.	Դասախոսներին և ուսանողներին տրված պատվոգրերի օրինակներ	3
18.	«ֆինանսներ» մասնագիտության շրջանակներում կիրառվող Իրավիճակային խնդրի օրինակներ	3
19.	Ռեֆերատների օրինակներ	3

20.	Ծրագրերի քննարկումը մեթոդական խորհրդում ու մանկավարժական խորհրդում հաստատող փաստաթուղթ, արդյունքի մասին եզրակացություն	3
21.	Ամբիոնների արձանագրությունների մատյաններ, այլ հիմնավորող փաստաթղթեր, որտեղ կնշվի մոդուլային կամ առարկայական ծրագրերում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, վերլուծական այլ փաստաթղթեր	3
22.	Մոդուլների ուսումնառության արդյունքների հանձնման օրինակ	3
23.	Տարբեր ստորաբաժանումների տարեկան պլանների օրինակներ /վերջին երեք տարվա բոլոր ստորաբաժանումների համար/	3
24.	Հաշվետվություններ /վերջին երեք տարվա ամբիոնների, ստորաբաժանումների, տնօրենի/	3
25.	Նիստերի արձանագրություններ /երեքական օրինակ յուրաքանչյուր ստորաբաժանումից/	3
26.	Մատյաններ /վերջին երեք տարվա ամեն կուրսից մեկական օրինակ/	3
27.	Ավարտական աշխատանքներ /յուրաքանչյուր երեք ՄԿԾ-ից երեքական օրինակ/	3
28.	Դասալսումների մատյաններ /վերջին երեք տարվա համար/	3
29.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ /վերջին երեք տարվա համար/	3
30.	Պրակտիկաների լրացրած օրագրեր /յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար երկուական օրինակ/	3
31.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը /վերջին երեք տարվա համար/	3
32.	Դասացուցակներ	3
33.	Բուկլետներ, հայտարարություններ ընդունելության հավաքագրման վերաբերյալ	4
34.	Լրացուցիչ պարապմունքների դասացուցակ	4
35.	Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրությունների օրինակներ	4
36.	Ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքում երիտասարդ դասախոսների գնահատման արդյունքները	5
37.	Առարկայական, մոդուլային ծրագրեր, ամբիոնի արձանագրությունների մատյաններ	5
38.	Կոլեկտիվ պայմանագրի օրինակ	5
39.	Աշխատանքային պայմանագրերի օրինակներ	5

40.	Վերապատրաստման վկայականներ	5
41.	Դասալսումների մատյաններ	5
42.	Ներքին գնահատման փաստաթղթեր	5
43.	Վերջին տարիներին աշխատանքից ազատված աշխատակիցների ցանկ և պատճառները	5
44.	Նախաավարտական պրակտիկաների հաշվետվություններ, որոնք ներառում են վերլուծություններ, դրանց գնահատականներ, հետազոտական ամփոփումներ	6
45.	Կարիերայի կենտրոնի հաշվետվություն	6
46.	Գնումների պլաններ վերջին 3 տարիների համար	7
47.	Տարհանման արդյունքների վերաբերյալ ՔՊ շտաբի եզրակացություն	7
48.	Որակի ապահովման ենթակառուցվածքների կատարած աշխատանքների հաշվետվություն	10
49.	Ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ հաշվետվություններ	10
50.	Վերջին երեք տարիներին իրականացված հարցումների վերլուծություն և հաշվետվություններ	10
51.	Որակի պատասխանատուի վերլուծություններ	10
52.	Շրջանավարտների բազա	10
53.	ՈԱ գործընթացների վերաբերյալ նախկինում առկա փաստաթղթեր	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Առարկայական կաբինետներ
3. Ամբիոններ
4. Համակարգչային լսարան
5. Լաբորատորիաներ
6. Սքայ ակումբ
7. Մարզադահլիճ
8. Գրադարան
9. Բուժկետ
10. Ընթերցասրահ
11. Սննդի ընդունման կետ
12. Միջոցառումների համար նախատեսված դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊՔ –Արարատի պետական քոլեջ
ՄՈՒՀ -Միջին մասնագիտական հաստատություն
ԶԾ- Զարգացման ծրագիր
ՄԿԾ–Մասնագիտական կրթական ծրագիր
ԱԾ- Առարկայական ծրագրի
ՄԾ-Մոդուլային ծրագիր
ՊԿՉ-Պետական կրթական չափորոշիչ
ՈԱՇ-Որակավորումների ազգային շրջանակ
ՈԻԽ-ՈՒսանողական խորհուրդ
ՄԽ-Մանկավարժական խորհուրդ
ԿԽ-Կառավարման խորհուրդ
ՈԱԿ-Որակի ապահովման կենտրեն
ՈԱ- Որակի ապահովում